

# ՆՈՅԼ ԱԶԱՏՈՒԵՑԱԻ ԶՐԿԵՂԵՂԻՆ

Ծիածանը պիտի դնեմ, յիշեցնելու ձեզի, թէ միշտ  
հոգ պիտի տանիմ իմ ժողովուրդիս:

Ըստ Ծննդոց 9.13

*Գոտու՞ն...*

Զուրը կարելի է շատ մը լաւ բաներու օգտագործել: Երբեմն, սակայն, ջուրը նաև դժուարութիւններ կու տայ: Նայէ՛ իւրաքանչիւր նկարին: Շրջանակի մէջ առ համապատասխան դէմքը, նկարին մէջ տեսնուածին համար:

Լաւ ☺

Վաստ ☹



Տես թէ ինչ պատահեցաւ Նոյին եւ ամոր ընտանիքին, եղբ անդադար անձրեւ եկաւ:

## ԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Նույն Մեծ Զրւեղեղէն և աշտուեաւ

ՀԱՅ ԾԱՆՈՒՅ 6.14 - 7.3, 5-20, 8.1-20, 9.1-17

Կարդացած ատենայի, պակսող տառերը արձանագրէ՛, օգտագործելով յուշող գոյները:



Աստուած Ն—յին ըսաւ որ տապան նը շինէ: Ան ըսաւ. «Նոյ, շուտով շատ անձրեւ

պիտի գայ եւ Զրի ղ ղ  
պիտի ըլլայ: Մո  
ընտանիցդ եւ տապան  
մտի՛ր: Քեզի հետ առ ամէն  
մէկ կենդանիէն երկու  
հատ: Կենդանիները գոյգ  
գոյգ եկան: Նախ  
առիւծները եկան, յետոյ  
վագրերը, արջերն ու  
ընձուղտները, ոչխարներն  
ու այծերը, սագերն ու  
բաղերը, ռնգեղջիւրներն  
ու փ ղերը:



Քառասուն — ը շատ անձրեւ  
եկաւ, առտուընէ մինչեւ իրիկուն:  
Զուրով ծածկուեցաւ ամբողջ  
աշխարհը: Տապանը ջուրերուն  
վրայ կը ծփ—ը: Նոյը իր  
ընտանիքով եւ մերսը գտնուող  
կենդանիները անվնաս մնացին:  
Երբ անձրեւը դադրեցաւ,  
տապանը եկաւ եւ կեցաւ



Արարատ լ—րան վրայ: Երբ ջուրերը  
չորցան, տապանին մէջ գտնուողները  
դուրս ելան: Կենդանիները դուրս  
ելելով զոյգ-զոյգ ամբողջ աշխարհին  
մէջ տարածուեցան: Աստուած օրինեց  
Նոյը եւ անոր զաւակները. «Ուրախ  
եղէք, եւ զաւակներ ու թոռնիկներ  
ունեցէք: Աստուած ծիածան մը դրաւ  
—մաքերուն մէջ, եւ ըսաւ. «Այս  
ծիածանը ձեզի պիտի յիշեցնէ, թէ Ես  
միշտ հոգ կը տանիմ ձեզի»:

## Առաջին Այգեպանը

Նոյն եւ իր գաւակները երբ դուրս եկան տապանեն, վար իջան Արարատ լեռան վրայէն: Նոյն այգի մը տնկեց այդ հովիտին մէջ եւ խաղող աճեցուց: Մինչեւ հինալաւ խաղող կ'աճի Հայաստանի մէջ:

Ուսուցիչը երբ կը կարդայ իւրաքանչիւր նախադասութիւնը, դուն անոր համապատասխանող նկարը կցէ՝ գիծով մը:

Արարատի շուրջ գտնուող լաւ հողը,  
լաւագոյն վայրն է խաղող աճեցնելու:



Արարատի վրայ գտնուող ձիւնը երբ հալի,  
գետերու եւ առուակներու վերածուելով  
կ'ոռոգէ խաղողի այգիները:



Պայծառ արեւը իր ջերմութեամբ կը  
քաղցրացնէ խաղողի ոյկոյզները:



## ԿԵԱՆՔԸ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Սաղողը Օգոստոսին կը հասունայ: Զայն քաղելէ ետք,  
և կեղեցի կը բերենք ողկոյզներ, շնորհակալութիւն յայտնելու  
խտութոյ: Զահանան կ'օրինէ զանոնք եւ կ'աղօթէ ըսելով.



**Օրհնէ՛ք քեզի նուիրուող խաղողի այս ողկոյզները:**

**Օրհնէ՛ զայն աճեցնող ու քեզի նուիրող ժողովուրդը:**

**Օրհնէ՛ այն որթատունկերը, որոնց վրայ աճեցան ասոնք:**

Ա. Ներսէս Շնորհալիի աղօքքը՝ խաղողի օրինութեան առիթով

Ճրինուելէ վերջ, կարելի է այլեւս զանոնք ուտել:

Երկէ՛ խաղողները եւ ապա դէմքդ գծէ՛, ամբողջացնելու համար պատկերը:



Հոգեւոր բառարան  
**ՕՐՀՆԵԼ**  
Սուլբ դարձնել

## ԿԵԱՆՔԸ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷջ

Խաղողը Օգստոսին կը հասունայ: Զայն քաղելէ ետք,  
Եկեղեցի կը բերենք ողկոյզներ, շնորհակալութիւն յայտնելու  
Աստուծոյ: Քահանան կ'օրինէ զանոնք եւ կ'աղօթէ ըսելով.



**Օրինէ՛ քեզի նուիրուող խաղողի այս ողկոյզները:**


**Օրինէ՛ զայն աճեցնող ու քեզի նուիրող ժողովուրդը:**

**Օրինէ՛ այն որբատունկերը, որոնց վրայ աճեցան ասոնք:**

Ա. Ներսէս Շնորհալիի աղօքքը՝ խաղողի օրինութեամ առիթով

Օրինուելէ վերջ, կարելի է այլեւս զանոնք ուտել:

Ներկէ՛ խաղողները եւ ապա դէմքդ գծէ՛, ամբողջացնելու համար պատկերը:



Հոգեւոր բառարան

**ՕՐԻՆԵԼ**

Սուրբ դարձնել

## ԳԻՒՇԻԾ՝ ԽԱՂՈՂԵՆ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ

Նոյն իր տնկած այգիին խաղողեն գինի պատրաստեց:

Վերջին Ընթրիքի պահում, Յիսուս գինիի բաժակը առաւ: Ան շնորհակալութիւն վերջին Ընթրիքի պահում, Յիսուս գինիի բաժակը առաւ: Ան շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ: Ան բաժակը տուաւ իր աշակերտներուն եւ ըսաւ. «Առէք ասիկա եւ խմեցէք: Ասիկա իմ արիւնս է»:

Այն բաժակը որ Սուրբ Պատարագի ընթացքին կը գործածուի մէջը գինի դնելու, կը կոչուի սկիհ: Քահանան Սուրբ Յաղորդութեան նշխարը կը թաքիսէ սկիհին մէջ եղած գինիին: Երբ հաղորդութիւն ստանանք, կը համտեսենք գինին եւ կը յիշենք Յիսուսի զոհագործումը մեզի համար:

Այս առարկաները մեզի կը յիշեցնեն այն ինչ որ Յիսուս կատարեց Վերջին Ընթրիքի պահում: Միացուր կէտերը եւ տես թէ ի՞նչ պատկեր պիտի ստանաս:

### ՏԱՌ ՄԷՋ՝ ԸՆՏԱՄԻՔԻՆ ԲԵԺԻՆԸ

Այս դասով ձեր զաւակը ծանօթացաւ Նոյի պատմութեամ եւ Մեծ Զրիեղեղին (Ծննդոց 6.14 - 7.3, 5-20, 8.1-20, 9.1-17): Զրիեղեղի պատմութիւնը սքանչելի է մանուկներուն համար, որովհետեւ զգայացունց դրուագ մըն է: Կենդանիներուն գոյգ-գոյգ տապան նտնելը շատ հետաքրքրական է վեց տարեկան երեխաներուն համար: Անվերջանալի անձրեւները, որոնք անբողջ աշխարհը կ'ողողեն, ներշնչիք են անոնց համար: Տապանին բարձրանալը մինչեւ լեռներուն կատարները, յաւելեալ ուշադրութիւնը կը գրաւեն աշակերտներուն: Այս դրուագին ճամբով, ճանուկները փորձառութիւնը կ'ունենան ջուրին բարերար եւ երեմն կործանարար ոյժին: Իրեմն դասին մէջ շեշտուածը Աստուծոյ հոգածութիւնն է եւ սէր Նոյի նկատմամբ, ինչպէս նաև անոր ընտանիքին եւ կենդանիներուն, որոնք փրկուեցան Զրիեղեղին, որ երկարատեւ անձրեւներու արդիւնք էր:

Ձեր ընտանիքին մէջ նոյն այս նիւթը՝ Աստուծոյ հոգածութեան ու սիրոյն, կրնաք շարունակել, օգնելով ձեր երեխային, որ կարենայ Աստուծոյ հրաշալիքները տեսնել իր շրջապատին մէջ: Օգնեցէք որ զգան թէ բարերեր անձրեւները ինչպէս կ'ոռոգեն դաշտերը, միւս կողմէ փորորկալից անձրեւները կրնան աղէտ դառնալ: Այդ բոլորին հետ կու գայ նաև Աստուծոյ սէրը, երբ բնութիւնը կը վերանորոգէ ինքզինք, եւ Աստուծած կը բուժէ մեր վկրեբը:

Աստուծոյ հոգածութեան գեղեցիկ մէկ օրինակը այն է, որ Նոյը այգի տնկեց եւ եղաւ առաջին նշակը հողին Վատահաբար աշակերտներ պէտք է ինանան հողին բերրիութեան մասին, երբ կ'ուտեն անկէ եկող պստուղները կանաչութիւնը եւ հացը: Եկեղեցին եղանակին առաջին պտուղը կ'օրինէ, իբրև խորհրդանշան աստուածային օրինութեան՝ հողէն եկող բոլոր բերբերուն: Օգոստոս ամսուն երբ խաղողը կը հասուննայ, հայ Եկեղեցին կ'օրինէ զայն Սուրբ Աստուածածի Վերափոխման Տօնին օրը: Սովորութիւն է որ հայեր բնաւ չեն ուտեր անկէ, մինչեւ օրին զայն Սուրբ Աստուածածի Վերափոխման Տօնին օրը: Ընտանիքիդ հետ միասնաբար սովորութիւն դարձուր խաղող չուտել մինչեւ օրինութեան օրը: Եթէ ձեր պարտեզին մէջ աճեցուցած էք որթատունկ, լաւ կ'օլլայ որ ձեր զաւակին հետ մէկ-երկու ողկոյզ պատրաստք ու տանիք քահանային, որպէսզի օրինուին:

## ՅՈՎՆԱՆԸ ԿԵՏ ԶՈՒԿԻՆ ՓՈՐԻՆ ՄԷՋ

Չատ ազնիւ ու ներողամիտ եւ ո՞վ Աստուած, եւ շատ համբերող ես Դուն:

*Ծառ Յովնանի 4.2թ*



### Գրտէրն...

Աստուած բազմատեսակ կենդանիներ ստեղծեց: Անոնցմէ ոմանք կը քալեն, ուրիշներ կը թռչին երկինքին մէջ, ոմանք կը լողան գետերու եւ ծովերու մէջ:

Շրջանակի մէջ առ այն բառը որ պատկերին կը պատշաճի:



ջուր իող օդ




ջուր իող օդ



ջուր իող օդ



ջուր իող օդ



ջուր իող օդ



ջուր իող օդ



Աստուածաշնչական մեր պատմութիւնը այս մեծ ձուկին մասին է: Անիկա Կէտ Զուկ կը կոչուի: Լաւ մտիկ ըրէք որպէսզի գիտնաք թէ ի՞նչ է այս ձուկին եւ նկարին մէջ երեւցող մարդուն պատմութիւնը:

## Յովանան ԿԵՏ ՉՈՒԿԻ ՓՈՐԻՆ ՄԵԶ

ՀԱՅ ՅՈՎԱՆԱԻ 1-4

Զօրաւոր հով մը պատմութեան այս քարթերը իրար խառնեց: Միայն անոնցմէ մի քանին իրենց տեղերը մնացին: Սկսիր թիւ 1-ով եւ թուէ միւսները, ճիշդ շարքը ի յայտ բերելով:




Աստուած Յովանին ըսաւ, որ  
երբայ Նիմուէի ժողովուրդին  
եւ ըսէ անոնց. «Աստուած քնաւ  
զոհ չէ ձեր ապրած կեանքն: 1  
Փոխեցէք ձեր կեանքը, կամ  
պիտի պատժուիք»:



Երբ կետ ծուկին փորին մէջ էր,  
Յովան աղօթեց Աստուծոյ: 5




Երբ նաւաստիները տեսան որ  
Յովանը պիտի մեղադրուի  
փոթորիկը սկսելուն համար,  
մտիկ ըրին ըսածը, եւ զինք  
ծովը նետեցին:



Յովան կր վախնար Նիմուէ  
երթալու: Աստուծմէ փախաւ  
ան եւ նաւ մը բարձրացաւ:  
Սակայն Աստուած մեծ  
փոթորիկ մը դրկեց:




Այս ատեն փոթորիկը  
դադրեցաւ: Աստուած մեծ  
ձուկ մը ղրկեց, որպեսզի  
Յովնանը կլլէ, եւ Յովնան  
ձուկին փորին մէջ մնաց  
Երեք օր եւ Երեք գիշեր: **4**



Նինուէի թագաւորն  
ժողովուրդը հաւատացին  
իրեն եւ փոխեցին իրենց  
կեանքը: Աստուած  
ուրախացաւ: ԱՅ մեղքաւ եւ  
չպատժեց զանոնք:



Աստուած լսեց անոր աղօքը  
եւ խօսեցաւ ձուկին. ան ալ  
Յովնանը փսխեց ցամաքին  
նոտ:



Երկրորդ անգամ ըլլալով  
Աստուած Յովնանին ըսաւ,  
որ Նինուէ Երթայ եւ իր խօսքը  
փոխանցէ անոնց:

## **Ես Յովանին կը նմանի՞մ արդեօք**

Մտածեցէք թէ եղա՞ծ է օր մը, երբ ձեր ծնողները ըսած են ընել բան մը, եւ դուք մերժած էք: Ի՞նչ պատահած է յետոյ: Ինչպէ՞ս մերժեցիք անոնց ըսածը ընել: Նկար մը գծեցէք ատիկա բացատրելու համար:



Մանուկները երբ անհնազանդ գտնուին, ծնողները կ'օգնեն անոնց որպեսզի սրբագրեն իրենց ընթացքը: Այս ցանկեն ընտրէ, եւ չ նշան մը դիր այն նախադասութեանց առջեւ որ ծնողները կ'ընեն, երբ իրենց զաւակները անհնազանդ գտնուին:

- Շարժապատկերի կը տանին
- Անոնց սիրած խաղալիքներէն ոմանք կը գրաւեն
- Շաքար-շոքոլա կու տան
- Խաղալը կ'արգիլեն
- Կը ստիպեն որ առանձին մնան սենեակի մը մեզ


## Ճապանական գրքի գլուխություն

Հասկանական  
համարակալություն

Համարակալությունը  
առաջանական է:

Եթե առաջանական  
համարակալությունը առաջանական է,  
ապա առաջանական է առաջանական  
համարակալությունը:

Տիկ առաջանական է.



Համարակալությունը առաջանական է առաջանական համարակալությունը:

Առաջանական համարակալությունը առաջանական է առաջանական համարակալությունը:

**Կոր արանջնորդ եղանակը՝ կրծանը ճշրդությունը պարզաբանելու համարությունը**

## Աստուած կը ներէ ինծի

Խօսքով կամ գործով երբ Վիրաւորենք ուրիշները, կամ երբ անհնազանդ գտնուինք մեր ծնողմերուն կամ ուսուցիչներուն, մենք Աստուած Վիրաւորած կ'ըլլանք: Մենք պէտք է ուրեմն ամոնց ներողանտութիւնը խնդրենք, եւ Աստուծմէ ալ ներողութիւն խնդրենք: Ամէն անգամ երբ մասնակցինք Սուրբ Պատարագին, կրնանք Աստուծոյ ներողանտութիւնը խնդրել:



Ծունկի կու գանք քահանային առջեւ եւ կը խոստովանինք մեր կատարած Վիրաւորական խօսքերն ու գործերը:

### 1 Մեղայ Աստուծոյ

Քահանայէն կը խնդրենք ըսելով. «Կ'աղաչեմ, աղօթէ Աստուծոյ որ ներէ ինծի»:



Քահանան կ'աղօթէ իմ վրաս եւ Հօր, Որդիին եւ Սուրբ Յոգիին անունով կը ներէ ինծի:

### 2 Աղօթէ ինծի համար

Հոգեւոր քառարան

**ՄԵՂ**

Սխալ գործել

### 3 Աստուած թողութիւն թող շնորհէ:

## ՏԱՆ ՄԷՋ՝ ԸՆՏԱՄԵՐԻՆ ԲԱԺԲՆԵԼ

Այսօրուան դասը ձեր զաւակին ուշադրութիւնը կը հրաւիրէ Աստուծոյ ստեղծագործութեան մէկ սքանչելի արարածին՝ կէտ ծուկին վրայ որ ովկիանոսներուն մէջ կը բնակի: Յովնանին կէտ ծուկի փորիին մէջ մնալուն դրուագը շատ կը սիրեն երեխաները, եւ անոր ճամբով ինազամդութիւն կը սորվին, ինչպէս Յովնան սորվեցաւ՝ դրուագը շատ կը սիրեն երեխաները, եւ անոր ճամբով ինազամդութիւն կը սորվին: Կէտ ծուկի փորիին մէջ մնալովկ: Աստուածաշունչն բացէք Յովնանի գիրքը, եւ մինչ այս կարծ գիրքին էջերը կը բանք, ըսէք որ ձեր երեխան պատմէ պատմութիւնը: Գտէք Յովնանի աղօթքը եւ կարդացէք զայն ձեր զաւակին:

Ձեր զաւակին մէջ պատասխանատու հնազանդութիւնը ծնողներուն նկատմամբ գօրացնելու համար, կրնաք նազ մը կազմակերպել, ուր Յովնան օրինակ ըլլայ իրենց, որպէսզի իրենք ալ հնազանդին իրենց ծնողներուն: Ձեր զաւակին ըսէք, որ ամէն անգամ երբ անհնազանդ գտնուին, կամ ուշանան իրենց ըսուածը կատարելու, իրենց պիտի տան Յովնան անունը: Այս անունը լսելով անոնք պիտի յիշեն, թէ ի՞նչ կրնայ պատահիլ երբ մէկը մտիկ ընտութիւնուն կը պատահանդիւնը: Կը յուսանք, որ անոնք այսպիսով աւելի ածին եւ պատասխանատութեան գիտակցութիւն ունենան, որ գիրենք պիտի առաջնորդէ պապացային Աստուծոյ Խօսքը մտիկ ընելու: Նոյնպէս, իբրեւ ծնողներ պէտք է յիշենք այսօրուան ուսկեայ համարը, եւ համբերող ըլլանք մեր զաւակներուն՝ ամոնց ածման ընթացքին: «Ճատ ազնիւ ու ներողամիտ ես ո՞վ Աստուած, եւ շատ համբերող ես Դուն» (Յովնան 4.2բ):

## ՅԻՍՈՒՍ ԿԸ ՀԱՆԴԱՐՏԵՑՆԷ ՓՈԹՈՐԻԿԸ

Դուն նեղութեան մէջ էիր եւ Աստուած ազատեց քեզ:

Ան դադրեցուց փոթորիկը եւ հանդարտեցուց ծովը:

*Ըստ Սաղմոսի 106.28-29*

### Գոտո՞ր՞ն...

Կարդա՛ եւ խօսի՛ր այս նկար-պատմութեան մասին:

Արային ընտանիքը բարեկամներով դուրս ելած է:

Տղաքը ի՞նչ կ'ընեն նաւակին վրայ:



Ի՞նչ վիճակի մէջ են այս նկարին մէջ երեւցող երկինքը եւ ծովուն ջուրերը: Արային դէմքը ի՞նչ վիճակ ունի: Շրջանակի մէջ առ այն բառը որ ճիշդ կը համապատասխանէ իր դէմքի արտայայտութեան:

**գարմացած**

**վախցած**

**ուրախ**

Մայրը եւ հայրը կու գան ու իրենց զաւակներուն ձեռքեն կը բռնեն:

Արան եւ իր քոյրը այլեւս չեն վախնար:




Նաւակ նստա՞ծ ես երբեք: Նաւակի վրայ եղա՞ծ ես մանաւանդ երբ մեծ ալիքներ եւ հով եղած է ծովուն վրայ: Այս շրջանակին մէջ գծէ՝ ումքող, ցոյց տալու համար թէ ի՞նչ պիտի զգայիր եթէ հով եղած օր մը նաւակի մէջ գտնուէիր:

Այսօրուան Աստուածաշնչական պատմութեան մէջ պիտի տեսնես թէ Յիսուսի աշակերտները ի՞նչ զգացին, երբ իրենց նաւակը մեծ ալիքներու բռնուեցաւ ծովուն մէջ:

## Յիսոս Կը ՀԱՆԻՎԱՐՏԵՑԱՇ ՓՈԹՈՒԿը

ՀԱՅ ՄԱՐԿՈՍ 4.35-41

Ուսուցչին հետ կարդա՛ պատմութիւնը, եւ ապա ներկէ՛ նկարը:



Յիսուս սկսաւ սորվեցնել ժողովուրդին, որ եկած էր Գալիլիայի ծովուն եգերքը, զինք մտիկ ընելու: Երեկոյեան Յիսուս եւ իր աշակերտները նաւակ մտան, որպէսզի լիճին միւս ափը անցնին:

Յանկարծ փոթորիկ մը սկսաւ: Յովը սկսաւ սուլել: Ալիքները սկսան բարձրանալ: Նաւակը աջ ու ձախ կը շարժէր: Զուրը սկսած էր լեցուիլ նաւակին մէջ:

Պետրոս եւ միւս աշակերտները սկսան ջուրը պարպել, սակայն նորէն կը լեցուէր նաւակը: Անոնք վախցան որ նաւակը կրնայ կոտրուիլ մէջտեղէն:



Յովիաննէս ետեւ դառնալով տեսաւ, որ Յիսուս անհոգ կը քնանար քարձի մը վրայ. «Վարդապե՞տ, վարդապե՞տ, արթնցի՛ր», ըսաւ Պետրոս: «Հոգդ չէ՝ որ մենք պիտի խեղդուինք», ըսաւ Անդրեաս:

Յիսուս արթնցաւ, հանդարտութեամբ նայեցաւ ամոնց եւ ոտքի կեցաւ նաւակին մէջ: Ան դադրեցուց հովը եւ ծովուն ըսաւ. «Խաղաղէ»:



Ֆիշդ այդ վայրկեանին հովը կեցաւ եւ ծովը դարձեալ խաղաղ եղաւ: Յետոյ Ան իր աշակերտները յանդիմանեց ըսնլով. «Ինչո՞ւ այդքան կը վախճաք: Ո՞ւր է ձեր հաւատքը»:

Աշակերտները մեծ յարգանքով նայեցան Յիսուսի եւ իրարու կ'ըսէին. «Ո՞վ է Յիսուս, որուն կը հնազանդին նոյնիսկ հովը եւ ծովը»:



## ԿԵԱՆՔԸ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԼՎ

Կը յիշե՞ս այնպիսի պահ մը, երբ շատ  
վախցած էիր: Ի՞նչ բանէ վախցար: Գծէ՝  
այստեղ նկար մը, ցոյց տալու համար  
վախութ:



Յիսուս օգնեց իր աշակերտներուն, երբ  
վտանգի մէջ էին անոնք: Ան խաղաղեցուց  
ծովը: Մենք կը հաւատանք որ Յիսուս  
մեզի ալ կ'օգնէ: Երբ վախ զգանք կամ  
վտանգի մէջ ըլլանք, կրնանք աղօթել  
Յիսուսի, եւ խնդրել որ մեզի օգնէ: Կրնաս  
այսպէս աղօթել.-

Աչքերդ փակէ եւ հանդարտորէն շնչէ.

- 1. Շնչէ- 1, 2, 3, 4, 5, 6**
- 2. Արտաշմչէ եւ ըսէ.- Յիսուս Փրկիչ**
- 3. Շնչէ- 1, 2, 3, 4, 5, 6**
- 4. Արտաշմչէ եւ ըսէ.- օգնէ ինձի**

(Երեք չորս անգամ կրկնէ)

## Մկրտութեամս խաչը

Քրիստոնեամերը ընդհանրապէս խաչ կը  
կրեն իրենց վիզեն, որպէսզի յիշեն թէ Յիսուս միշտ  
իրենց հետ է: Քահանան մասնաւոր խաչ մը կ'օրինէ  
մկրտութեամդ ժամանակ, որ անցուած կ'ըլլայ կարմիր եւ  
ճերմակ ժապաւէնի մը վրայ: Ասիկա կը կոչուի  
«Նարօտ»: Մտիկ ըրէ երբ ուսուցիչը երգէ այն երգը,  
զոր քու ծնողներդ երգած են հաւանաբար,  
երբ փոքր էիր դուն: Այդ բառերը ի՞նչ  
կ'ըսէն խաչի մասին:



### ՕՐՈՇ

Ուկեայ խաչը Վգիդ շուրջը,  
պահապանդ է, նարօտով մը  
կապուած եւ օրինուած քահանայէն:

Հոգեւոր բառարան

### ՆԱՐՈՏ

Մկրտութեամ պատկ,  
կարմիր եւ ճերմակ  
ժապաւէններով  
պատրաստուած:

## ՂԵԼՈՆԴ ԵՐԵՒԱՆ պատմութիւնը

Հայ ժողովուրդը վտանգի դիմաց կը գտնուեր: Անոնց դրացի եղող Պարսկաստանը չէր ուզեր որ հայեր Յիսուսը պաշտեն: Անոնք ստիպեցին հայերը, որ սուտ աստուածներ պաշտեն, եւ այս պատճառով պատերազմեցան հայերուն դէմ:

Հայերը շատ կը սիրէին Յիսուսը: Անոնց պետք՝ քաջ Վարդան Մամիկոնեան Սպարապետը գիտէր թէ Յիսուս ծնած էր ամբողջ աշխարհի մարդկութիւնը փրկելու համար: Ան բնաւ չէր վախնար պարսիկ թագաւորին բանակէն:

Վարդան Սպարապետ իր բարեկամէն՝ Ղելոնդ Երեցէն խնդրեց որ աղօթէ բանակի գինուորներուն հետ: Ղելոնդ Երեց անոնց Սուրբ Հաղորդութիւն ալ տուաւ: Անիկա պատերազմի դաշտին վրայ էր, իր ձեռքի խաչը բարձր բռնած, որպէսզի գինուորները տեսնեն եւ քաջալերուին: Ամէն անգամ որ տեսան խաչը, անոնք զգացին որ Յիսուս իրենց հետ է: Անոնք բնաւ չէին վախնար:



### ՏԱՆ ՄԵԶ՝ ԸՆՏԱՆԻՔԲԵՐՆ ԲԱԺԻՆԸ

Յիսուսի կատարած այս կարծ հրաշագործութեան պատմութիւնը ընտրուած է այսօրուան դասին համար, որպէսզի աշակերտները աղիթ ունենան նտածելու Աստուծոյ ստեղծած բնութեան հրաշալիքներուն մասին: Ընտանեօթ կարողացէք **Մարդու 4.35-41** հատուածը: Չեր զաւակներուն ըսէք որ պատմութիւնը գծեն նկարով, կամ թատերականօրէն ծեզի ներկայացնեն պատահածը:

Ծովուն փոթորիկին ննան զօրաւոր փոթորիկ մը կրնայ վախ ազդել մեզի: Մանուկները շատ կրնան վախնալ, մանաւանդ բնութեան զօրաւոր ոյժին դիմաց: Յիսուսի աշակերտները սարսափած էին այս փոթորիկէն, որ Գալիլիայի լիճին վրայ յանկած սկսած էր: Փոքրիկ նաւակի մը մէջ ըլլալով, անոնք շատ վախցած էին: Յիսուսի անհոգ մերկայութիւնը նախ յուսահատեցուց գիրենք: Խոկ երբ անօնք տեսան որ Յիսուսի հրամանով խաղաղեցաւ ծովը, զարմանքով ու երկիւլածութեամբ լեցուեցան: Այս փորձառութիւնը աղիթ եղաւ որ անոնց հաւատքը աւելի զօրանայ, ճանչնալով թէ Յիսուս իմբ է Փրկիչը:

- Ընտանիքի հետ խօսէ՝ այն պահուան մասին, երբ շատ վախցած էիր: Իրաքանչիւրը թող ըսէ թէ ինչպէս իր վախը փարատած էր:
- Զաւակիդ սորվեցուր Ս. Ներսէս Ծնորհալիի աղօթքը՝ «Պահապան Ամենայնի»ն, որ քաղուած է «Հաւատով խոստովանին» աղօթքն: Իրենց հետ միասին աղօթէ երբ դպրոց պիտի երթան, անկողին մտնելէ առաջ, ինչպէս նաեւ որեւէ վտանգի ժամանակ:

**Պահապան Ամենայնի քրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ, ի տուէ եւ ի գիշերի, ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարի, ի ննջել եւ ի յառնել, զի մի երեք սասանեցայց: Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ իմծ՝ բազմա մեղիս:**

- Զաւակդ միշտ խաչ մը թող կախէ իր վիզէն, որ օրինուած է քահանային կողմէ: Սորվեցուր ամոր, որ յատկապէս վտանգի ու դժուարութեան մէջ համբուրէ զայն, որպէսզի յիշէ թէ Յիսուս իր հետ է:

## ՅԻՍՈՒ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ ԿԸ ԿԵՐԱԿՐԵ

Յիսուս իր ընկերներուն ըստ. «Եկեք նախաճաշ ընենք»:

Ըստ Յովհաննէսի 21.12

### Գուտի՞ր...

Ուտելը հաճոյք է, մանաւանդ երբ անօթի ենք:

Մենք առաւտուն կը նախաճաշենք, կեսօրին կը ճաշենք, իսկ իրիկունք կ'ընթրենք:

Ժամանակ դժու մը ☺ գծ՛ այն կերակուրին դիմաց, որ շատ կը սիրես ուտել:

**Նախաճաշակի**

**ճաշ**

**Ընթրիք**

Շրջանակի մէջ առ այն  
կերակուրը, որ ճաշի այդ  
ժամուն կ'ուզես ուտել:



Արծակուրդի օրերուն, կամ ամառուան դաշտագնացութեանց ընթացքին, մեր բարեկամներուն ու ծանօթներուն ինտ  
կը ճաշենք: Լաւ ճաշեր կ'ըլլան այնտեղ:  
Կը յիշե՞ս օր մը երբ բարեկամներու ինտ  
ճաշեցիք: Ո՞վ իրաւիրեց ձեզ:

Գծ՛ քու նկարդ, ընկերներու ինտ  
ճաշած ժամանակ:

Յիսուս շատ անգամներ կանչեց իր աշակերտները, միասին ճաշելու համար:  
Պատմութեան մէջէն գտիր թէ ո՞ւր ճաշեցին անոնք:

## Յիսուս Իր ընկերություն Կը Կերպարէ

Հայ Մատեոս 12.1-3 և Յովանն 21.1-17

Կարդացած ատենդ, պակսող տառերը աւելցուր, գումաւոր տուփիկները օգտագործելով:



Յիսուս եւ իր աշակերտները երբ ցորենի արտերէն կ'անցնէին, աշակերտները ցորենի հասկեր քաղցին եւ սկսան ուտել: Փարիսեցիներէն ոմանք երբ տեսան, Յիսուսի ըստ: «Ինչո՞ւ համար կը ձգես որ աշակերտներոյ ցորեն քաղեն եւ տեն Շաբաթ օրով:

Ասիկա Օրէնքին դէմ է,  
որ չ'արտօներ Շաբաթ  
օրով գործ աշխատիլ»:

Յիսուս անոնց  
պատասխանեց. «Չէ՞ք  
տեսներ որ անոնք  
անքի են: Զգեցէք որ



ուտեն: Աստուած կ'ուզէ որ ազնիւ ըլլանք եւ կերակուր տնք անօթիներուն:

Այնքան ատեն որ ին հետս են, անոնք կրն ն ուտել»:

Յաջորդ օրը, աշակերտները ծովեցերքը կը սպասէին իրենց Վ ողապետին:

Անոնք որոշեցին ձուկ որսալ: Ամբողջ գիշերը յոգնեցան, եւ մէկ ձուկ իսկ չորսացին: Երբ արւը կը բացուէր, Յակոբոս լսեց ձայն մը որ Կ'ըսէր. «Զ կունի՞ք, տղաք»: Անոնք պատասխանեցին. «Ո՛չ իսկ մէկ հատ»: «Չեր ուռկանները աջ կողմը նետեցէք», ըսաւ ան ծովուն եզերքէն: Աշակերտները մէկ անգամ ալ նետեցին ուռկանները: Երբ անոնք սկսան վեր քաշել աւ րանները, զարմացան... «Զուկ», պոռաց Պետրոս, «ձուկ», պոռաց

Յովիաննէս: «Ծովեցերքը կեցող մարդը Յիսուսը

պէտք է ըլլայ...»: Երբ ծովեցերք ելան, տեսան որ կրակի վրայ ձուկ կը խրովուի: «Բերէք ծեր որսացած ձուկերէն եւ դրէք կրակին վրայ:

Գիտէի որ անօթի կրնայիք ըլլալ: Եկէք եւ միասին նախ ճաշ մը ընենք», ըսաւ Յիսուս ժպտալով: Անոնք կրակին շուրջ նստան:

Յիսուս անոնց տուաւ ձուկ եւ հց:

Երբ անոնք կշտացան, Յիսուս Պետրոսին ու

միւս աշակերտներուն ըսաւ. «Իմ քոլոր

ոչխարներս եւ գառնուկներս կերակրցէք»:



## ԿԵԱՆՔԸ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԷՋ



Յիսուս իր աշակերտներուն խոստացաւ, որ միշտ իրենց հետ պիտի ըլլայ: Ան կ'ուզէր որ անոնք չմոռնային, թէ ինք ինչպէս կշտացուց գիրենք երբ անօրի էն: Վերջին Ընթրիքի պահուն Յիսուս հաց առաւ սեղանէն: Ան օրինեց եւ շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ: Ապա հացը կտրեց եւ իր աշակերտներուն տուաւ ըսելով. «Առէք ասիկա եւ կերեք: Այս հացը իմ մարմինս է»: Յետոյ Ան առաւ գինիի գաւաթը: Օրինեց զայն եւ շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ: Ան խնեց

Եւ տուաւ գաւաթը իր աշակերտներուն ըսելով. «Առէք ասիկա եւ խմեցէք: Ասիկա հմ արիւնիս գաւաթն է»:

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ որ այս կերակուրը միշտ կատարեն այս ձեւով:

Սուրբ Պատարագ կը մատուցուի ամէն Կիրակի:


Կը կատարուի նաեւ տօնական օրերուն, ինչպէս նաեւ սուրբերու տօներուն առիթով:

Քահանան կ'օրինէ հացը եւ գինին, ինչպէս Յիսուս օրինած էր:

Երբ Սուրբ Հաղորդութիւն ստանանք, մենք Յիսուսն է որ ընդունած կ'ըլլանք օրինուած



հացին



Եւ



գինիին մէջէն

Եւ կը գիտնանք որ Ան մեզի հետ է:

Յոգեւոր քառարան

### ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Արարողութիւն,  
յիշելու համար Յիսուսի  
Վերջին Ընթրիքը:

## Շնորհակալութիւն կը յայտնենք Աստուծոյ մեզի պարգևած կերակուրին համար

Աստուծած մեզի շատ համեղ կերակուրներ տուած է, որպէսզի ուտենք: Ան կ'օգնէ մեզի, որպէսզի վայելենք այդ բոլորը:  
Գիծ մը քաշէ բառերուն եւ անոնց համապատասխանող նկարներուն միջեւ:

Պարտիզանը կ'աճեցնէ



Մաման եւ Պապան



Ես, \_\_\_\_\_

Շնորհակալութիւն կը յայտնենք Աստուծոյ մեր կերած կերակուրին համար:  
Կ'աղօթենք ըսելով.

**Փառք կերակրողին տիեզերաց, որ զմեզ կերակրեաց եւ լիացոյց,  
նմա փառք յափտեամս. Ամէն:**

### ՏԱՆ ՄԵՋ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲԱԺԻՆԸ

Այս դասին երկու բաժիններն ալ կերակուրի հետ կապ ունին: Երկութին մէջ ալ Յիսուս զգաց իր աշակերտներուն կերակուրի եւ սնունդի կարիքը եւ տուաւ անոնց պէտք եղածը:

Մանուկները շատ լաւ գիտեն թէ ի՞նչ կը նշանակէ անօրի ըլլաւ, եւ կը զգան կշտանալուն հաճոյքը: Անոնք շատ հաճոյք կ'առնեն մանաւանդ, այլ երեխաններու հետ ճաշէլ: Այսօրուան պատուութիւնները մեր ուշադրութիւնը կը հրակիրեն Յիսուսի հոգածութեան, իր աշակերտները կերակրելու գժով: Մանուկները շատ դիւրաւ կարելի է նոյնացնել Յիսուսի աշակերտներուն հոգածութեան, եղր միասին կ'ուտսին, արտերեն կ'անցնեին կամ տաճար կ'երթային միասնաբար: Նախաճաշի պատզացած ուրախութեան, եղր միասին կ'ուտսին, արտերեն կ'անցնեին կամ տաճար կ'երթային միասնաբար:

Կերտուներուն համար:

Յիսուսի այս հոգատարութիւնը կը շարունակուի մինչեւ իհմա Սուրբ Պատարագին միջոցաւ: Այս դասով աշակերտները կը սորվին, որ Սուրբ Պատարագով Յիսուս մէզ կը կերակրէ ու կը կշտացնէ: Դան ու գինին Սուրբ Պատարագի ընթացքին խորսորդութիւնը, որ Սուրբ Պատարագով Յիսուս մէզ կը կերակրէ ու կը կշտացնէ:

Խըրդանշաններ են մեր մէջ Յիսուսի յափտեամսական ներկայութեան:

1. Կարդա Յովհաննե 21.1-17 եւ զաւակդ թող ներկայացնէ Գալիլիայի ծովեզերքի տեսարանը: Ըսէք որ պատմէ ծեզի իր սիրած մէկ ճաշը ուտելուն մասին:
2. Իւրաքանչիւր ճաշէ ետք, ծեր զաւակին հետ աղօթեցք այս աղօթքը որ դասին մէջ սորվեցան, որպէսզի անհկա սորվի շնորհակալութիւն յայտնել Աստուծոյ:
3. Յիսուս Պետրոսի եւ միւս աշակերտներուն ըսաւ որ կերակրեն իր «ոչխարները», իր ժողովուրդը: Օգնեցեք ծեր զաւակին յայտնել ի կերակրեն իր «ոչխարները»:
4. Զիսուս Պետրոսի եւ միւս աշակերտներուն ըսաւ որ կերակրեն իր «ոչխարները», իր ժողովուրդը: Օգնեցեք ծեր զաւակին յայտնել ի կերակրեն իր «ոչխարները»:

Աստուած մեզի ընտանիք տուած է որպեսզի  
սիրենք զայն: Սաման ու պապան մեզ կը խնամեն եւ նը  
պաշտպանեն: Մեր եղբայրներուն ու քոյրերուն հետ խաղալը  
ի՞նչ հաճելի է: Մենք մեր ընտանիքներուն  
կը պատկանինք:





### Սիրելի՝ ծնողներ

Մանուկի մը մուտքը ընտանիքեն ներս, առաջին եւ ամենէն կարեւոր փորձառական քայլն է համայնքի մը կազմութեան: Աստուածաշունչի առաջին ընտանիքին կեանքը կարդալով, մանուկները կը սկսին բաղդատական ընել եւ նոյնութիւնները եւ տարբերութիւնները տեսնել իրենց եղբայրներուն ու քոյերուն միջեւ: Իսահակի ծնունդին պատմութիւնը կարդալով, անոնք կը սորվին թէ ամոր ծնունդը ինչքան մեծ ուրախութիւն պատճառեց Աբրահամին եւ Սառային: Անոնք շատ կը քաջալերուին իբրև ձեր գաւակները, երբ Զաքարիայի եւ Եղիաբերի գաւակին ծնունդին մասին կը կարդան: Ի վերջոյ անոնք կը սորվին գնահատել իրենց մայրն ու հայրը, երբ լսնն Յիսուսի երկրաւոր հօր՝ Յովսէփի պատմութիւնը:

## ԱՌԱՋԻՆ ԸՆՏԱՆԻՔԸ


Աստուած օրինեց Արամը Եւ Եւան Եւ ըսաւ անոնց.  
«Ճատ զաւակներ ունեցէք Եւ այս երկիրը լեցուցէք»:

*Ըստ Ծննդոց 1.28*

### Գոտերն...

Ամէն մարդ ընտանիքի մը մաս կը կազմէ: Ընտանիքները կրնան մեծ ըլլալ, կամ՝ փոքր: Կարգ մը ընտանիքներ կազմուած կ'ըլլան մամայէ, պապայէ Եւ փոքրիկներէ: Ուրիշ ընտանիքներ մեծ մամա Եւ մեծ պապա կ'ունենան, որոնք նոյն տան մէջ կ'ապրին: Կարգ մը ընտանիքներու մէջ հօրաքոյրներ կամ քեռիներ հոգ կը տանին երեխաներուն: Ինչ տեսակ ընտանիքի մէջ ապրիս, մէկ բան յստակ է, որ ընտանիքի մը կը պատկանիս:

Ինքողինքող գծէ՝ ինչպէս նաեւ ձեր ընտանիքի անդամներուն դէմքերը:



Ահաւասիկ ընտանիքի անդամներու կարգ մը անուններ, որոնք հակառակ կողմէն գրուած են: Ուղիղ կերպով գրէ՝ զանոնք: Շրջանակի մէջ ա՛ն այն բառերը, որոնք քու մասիդ են:

**Ռյոք**

**Ռյահ**

**յաղտ**

**Ռյաբդէ**

**Ռյամ**

**կիջղա**

Գրէ՝ ընտանիքիդ անդամներուն անունները:

## ԱՍՏՈՒԱԾԱՇՈՐԻՉԵՒ

### Աստուած առաջին ընտանիքը

ՀԱՅ ԾԱԿՈԹ 1-3, 4.1-7, 17, 5.1-4

Աստուած երբ աւարտեց աշխարհի ստեղծագործութիւնը, ստեղծեց Ադամը եւ Եւան: Ան իր պատկերով ստեղծեց զանոնք: Աստուած օրինեց Ադամը, Եւան եւ շատ մը բարիքներ տուաւ, որպէսզի վայելեն:

Աստուած ուզեց, որ Ադամ եւ Եւա ընտրելու ազատութիւն ունենան: Ան միայն մէկ օրէնք տուաւ անոնց, որպէսզի գործադրեն: Ան ըստ.



**Դուք կրնաք այս պարտեզին մէջ Եղած ամէն պտուղներէն ուտել,  
բացի պարտեզին մէջտեղը գտնուած ծառին պտուղն:**

Օր մը Ադամ եւ Եւա շատ սխալ ընտրութիւն մը կատարեցին եւ չինազանդեցան Աստուածոյ դրած օրէնքին: Աստուած շատ տխրեցաւ: Ադամ եւ Եւա այլեւս չէին կրնար մնալ Աստուածոյ մօտ: Անոնք շատ պիտի յոզնէին, որպէսզի իրենց առօրեայ կերակուրը գտնէին: Ադամ ու Եւա երկու տղաներ ունեցան: Նախ Կայէնը ծնաւ: Ապա Եւա ուրիշ տղայ մըն ալ ունեցաւ եւ անոր անունը Աքէլ դրաւ: Կայէն եւ Աքէլ ուրիշ շատ մը եղբայրներ եւ քոյրեր ալ ունեցան, որոնց բոլորին ծնողքը Ադամ ու Եւան էին:

Կայէնը մեծցաւ եւ շատ լաւ մշակ դարձաւ: Ան  
տարբեր-տարբեր տեսակի պտուղներ  
կ'աճեցներ: Իր եղբայրը՝ Արէլ, շատ տարբեր  
էր Կայէնն: Ան կը սիրէր ոչխարներ ու այծեր  
խնամել: Ան շատ մը լաւ անասուններ ուներ:



Օր մը, Կայէն իր աճեցուցած պտուղներէն քիչ  
մը բերաւ Աստուծոյ տալու համար: Աստուած  
ընդունեց Կայէնին նուէրը: Իր եղբայրը՝ Արէլ,  
նորածին գառնուկներէն բերաւ եւ Աստուծոյ  
նուիրեց: Աստուած շատ ուրախացաւ: Ան  
Արէլին նուէրը աւելի սիրեց քան Կայէնին  
բերածը:

Կայէն շատ բարկացաւ: Ան սկսաւ նախանձիլ իր եղօր: Ան ջղայնացած էր:

Այստեղ գոէ աշխարհի առաջին ընտանիքին անունները:

հայր

մայր

եղբայր


եղբայր

## **Մեզի շատ կը սիրեմ**

Ընտանիքի անդամները շատ մը բաներ միասին կը կատարեն: Ընտանիքի մը մէջ շատ զաւակներ կրնան ըլլալ, բայց ծնողները բոլորն ալ հաւասարապէս կը սիրեն: Իւրաքանչիւր զաւակ բացառիկ է իրենց համար:

Անոնցմէ ոմանք տղայ կ'ըլլան, ուրիշներ աղջիկ: Ոմանք կարճ, ոմանք երկար, ոմանք կը սիրեն երգել, ուրիշներ գնդակ խաղալ: Ոմանք լաւ կրնան կարդալ, ուրիշներ կրնան առարկաներ շինել:

Այստեղ գծէ՛ այն ինչ որ տան մէջ դուն շատ լաւ կ'ընես:




## ԿԵԱՆՔԸ ԵԿԵՂԵՑԻՑ ՄԷՋ

### ԵԿԵՂԵՑԻՑ ԱՍՏՈՒԺՈՅ ԸՆՏԱՆԻՔԸ Է

Յիսուս ժողովուրդին ըսաւ, թէ Աստուած մեր հայրն է: Իբրեւ լաւ հայր մը, Ան իոց կը տանի մեզի: Ան որ Յիսուսը կը սիրէ եւ կը հետեւի Անոր, իր եղբայրը եւ քոյրը կ'ըլլայ: Մենք Աստուժոյ Ընտանիքին՝ Եկեղեցւոյ մաս կը կազմենք:

Ինչպէս մեր Ընտանիքին մէջ, Եկեղեցւոյ մէջ ալ տարբեր մարդիկ կան.- ծեր եւ երիտասարդ, տղաք եւ աղջիկներ, հայրեր եւ մայրեր, մեծ ծնողներ, հօրաքոյրներ եւ մօրեղբայրներ, զարմիկներ եւ շատ մարդիկ: Ոմանց մորթին գոյնը մութ է, ուրիշներ աւելի ճերմակ մորթ ունին: Անոնցմէ ամէն մէկը լաւ բան մը կրնայ ընել Աստուժոյ Ընտանիքին մէջ: Ահաւասիկ տարբեր աշխատանքներ, որոնք մարդիկ կրնան ընել Եկեղեցւոյ մէջ, Աստուած օրինելու համար:



**Երգել**




**ՊՐԱՄ  
ՇՈՒԽԻՐՆԵԼ**



**Սաղմոս  
Կարդալ**



**Քահանային  
օգնել**



**Կիրակնօրեայ  
դպրոցին մէջ  
դաս տալ**



**մաս  
շինել**

Յոգեւոր քառարան


### Մ Ա Ս

Օրինուած հաց, որ  
Սուլը Քաղորդութենեն  
ետք կը ստանանք  
Եկեղեցին:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԸՆՏԱՆԻՔԸ ՀԱՐԻԿԱՎՈՒԹԻՄ ԿԸ յԱՅՄԱԷ ԱՆՈՐ

Մտիկ ըրէ ուսուցիչին, երբ այս նախադասութիւնները  
կը կարդայ: Գիծ մը քաշէ, նախադասութեան եւ անոր  
հաճապատասխանող նկարին միջնէ:

Լենան կին մըն է որ մանիշակագոյն  
հագուստներ կը ծախս: Ան կը հաւատայ Յիսուսին:  
Ան հաւատացեալները կը իրաւիրէ իր տունը,  
աղօթելու համար:



Պողոսը վրանագործ էր:  
Ան շատ սիրեց Յիսուսը: Յեռու Երկիրներ  
ճամբորոց ան, որպէսզի Յիսուս Քրիստոսի  
մասին պատմէ բոլորին:

Շուշանիկ Սուրբ Վարդան  
Մամիկոնեանի աղջիկն էր: Ան իր  
զաւակներուն սորվեցուց  
Աստուած սիրել:

### ՏԱՅ ՄԵԶ՝ ԸՆՏԱՆԻՔԸ ԲԱԺԻՆԸ

Այս մասին առաջին դասը ընտանիքներու մասին, կը ներկայացնի Աստուածաշումչի առաջին՝ Աղամ-Եւայի ընտանիքը:  
Այս մասին կազմելու շատ լաւ փորձառութիւն մըն է, եւ երանի թէ ամէն փոքրիկ ընտանիքի մը նաև կազմէ: Ընտանիքի մը մաս կազմելու շատ լաւ փորձառութիւն մըն է, եւ երանի թէ ամէն փոքրիկ ընտանիքի մը նաև կազմէ: Ընտանիքին մէջ երեխաները իրենց եւ ծնողներուն միջնէ գոյութիւն ունեցող նամանութիւնները կը յայտնաբերեն, ինչպէս նաև հետաքանի մէջ պատմութիւնները կը նանշնան, եւ կարողութիւնները եւ տաղանդները կը գիտնան:

Պատմութեան մէջ, փոքրիկները իրենց ընտանիքին պատկերու տեսան - հայր, մայր եւ զաւակներ: Անոնք տեսան թէ ինչպէս բարութեան պատկերը տեսան - հայր, մայր եւ զաւակներ: Անոնք տեսան թէ ինչպէս հիրաքանչիւր անձ ունի հիրայատուկ կարողութիւններ եւ իր հետաքրքրութիւնները: Դասին նիւթը տարածուեցաւ նաև Եկեղիւրածուն վրայ, իբրև Աստուածոյ ընտանիքը: Քրիստոսի հետ մեր քոյ ու Եղբայր ոլլալը, մեզ իրարու կը կապէ նաև դեռև Ընտանիքին վրայ, իբրև Աստուածոյ ընտանիքը: Մանուկները այսպիսով կը նանշնան նաև Եկեղեցւոյ անդամներուն ունեցած տաղանդներն ու իբրև Աստուածոյ զաւակներ: Մանուկները այսպիսով կը նուիրուին:

- Զաւակների Աստուածոյ ստեղծած առաջին ընտանիքին նկարը թող գտ: Ըստք որ ծեզի պատմէ Աղամի ու Եւայի ընտանիքին պատմութիւնը:
- Օգնեցէք ծեր զաւակին, եւ ծեր ընտանեկան ծառը կազմելով, թող ճանչնայ թէ ո՞ր ընտանիքին մաս կը կազմէ ինք: Ծանոթագրութեան մէջ կեցուցէք աւազով լեցուն խորունկ ամանի մը մէջ, եւ ծիւղին վրայ կախուած թուղթերուն վրայ գրեցէք հայր, ուղայ, աղջիկ: Զոյգ մը թուղթերու վրայ գրեցէք մեծ հայրերուն եւ մեծ մայրերուն անունները (նոյնիսկ եթէ մահանայր, տղայ, աղջիկ):
- Ժանանակ տրամադրեցէք ընտանիքի հիրաքանչիւր անդամին մասին խօսելու: Ենք զաւակին ըստք ծեզմէ իրաքանչիւր ընտանիքին մասին, որով ծեր ունեցած տաղանդը: Ենզմէ իրաքանչիւրը թող մտած կերպի մը մասին, որով ծեր ունեցած տաղանդները կրնաք ծառայեցնել Աստուածոյ:

# ԶԱԻԱԿՆԵՐԸ ՄԵԾ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ԿԸ ՊԱՏՃԱՌԵՆ ԻՐԵՆՑ ԾՆՈՂՆԵՐՈՒՆ

Դուն հօրդ ուրախութիւնն եւ մօրդ երջանկութիւնը:

Ըստ Առակներու 23.25

## Գրտէրն...

Ահաւասիկ Սօնան եւ Աւետիսը: Անոնք շատ ուրախ են, որ Աստուած նորածին փոքրիկ մը տուաւ իրենց, որուն հոգ պիտի տանին:



Ահաւասիկ Նինան եւ Գառնիկը: Անոնք փոքրիկ Կորիւնին ծնողներն են: Կորիւնը նոր սկսած է քալել: Ինչքա՞ն ուրախ են անոնք արդեօք:

Եւ ահաւասիկ Արտաշէսը, որ իր դպրոցական պարտականութիւնը ցոյց կու տայ իր ծնողներուն: Ի՞նչ կ'ընեն իր ծնողները: Կը խորիի՞ս որ լաւ ըրած է իր պարտականութիւնը:



Ծնողները շատ ուրախ ու երջանիկ կը զգան տեսմելով իրենց գաւակներուն մեծնալը: Ահաւասիկ ոտանաւոր մը, որ մայր մը գրած է, իր ուրախութիւնը յայտնելու համար:

**Ամէն մայր կրնայ հասկնալ,  
Այն ուրախութիւնը որ ես կը զգամ,  
Որովհետեւ առաջին անգամ ըլլալով,  
Իմ փոքրիկ Արաս գաւաթ մը ջուր տուաւ ինծի...**

Սիլվա Կապուտիկեան



Քու դէմքդ եւ մազերդ գծէ՝ այս նկարին մէջ:

Աքրահամ եւ Սառա ի՞նչ զգացին արդեօք երբ իրենց գաւակը ծնաւ: Չտիր թէ ի՞նչ դրին անոր անունը:

## ԱՍՏՈՒ-ԱՌԱՋՈՒԶԵՆ

### Արաւամ եւ Սառա ծնողը կը ուսուսն

ՀԱՅ ԾԱԴԻՆ 17.15-19, 18.1-15, 21.1-8




Սառա



Աբրահամ



Նորածին



Իսահակ

Օր մը Աստուած ըսաւ. «Գնա՛ այն Երկիրը, որ ես քեզի պիտի ցոյց տամ»:



հնագանդեցաւ Աստութոյ: Ան իր կնոջ՝



հետ ճամբորդեց մինչեւ

այն տեղը, երբ Աստուած ըսաւ. «Այս տեղը քու նոր տունդ պիտի ըլլայ»:



Եւ



շատ ծեր էին եւ զաւակ չունեին: Օր մը Աստուած



ըսաւ. «Քու կինդ՝



պիտի ունենայ



մը, եւ դում անոր անուն պիտի

դնես»: «Ինծի պէս ծեր մարդ մը ի՞նչպէս կրնայ



ունենալ», մտածեց ան:

Ամրան տաք օր մը



Երեք ճամբորդներ ընդունեց: Անոնց ջուր եւ կերակուր

տուաւ ան: Անոնցմէ մէկը ըսաւ. «Քու կինդ՝



տղայ զաւակ մը պիտի

ունենայ գարնան»:



շատ զարմացած էր: Ան զգաց որ Աստուած իր հետ կը խօսի: Երբ



լսեց ասիկա, խնդաց: Ան շատ ծեր էր եւ չեր կրնար  ունենալ:

Ամիսներ վերջ տղայ



մը ծնաւ



եւ



: Անոնք անոր անունը



որին:



եւ



շատ ուրախ էին: Անոնք շատ կը սիրեին



եւ հոգ կը տանէին անոր: Երբ



սկսաւ քալել ու խօսիլ, վազել ու խաղալ,



ըսաւ. «Դիմա պէտք է խրախճանք ընենք: Պիտի իրաւիրենք մեր

բարեկամները, որպէսզի գան եւ մեզի հետ ուրախանան, որովհետեւ Աստուած



դրկեց մեզի»: Աստուած իր խոստումը յարգեց:


## ԿԵԱՆՔԸ ԵԿԵՊԵՑԻՈՅ ՄԷՋ

Մանուկները շատ կարեւոր են ծնողներուն համար: Մեր Եկեղեցին մեզի կը սորվեցնէ Յովակիմին ու Աննային պատմութիւնը, որոնք միշտ կ'աղօթէին զաւակ մը ունենալու համար: Անոնք երկար տարիներէ ի վեր ամուսնացած էին եւ հիմա արդէն ծերացած: Անոնք զաւակ չունեին:



գետինը ալեց

Օր մը Յովակիմ լեռ բարձրացաւ եւ այնտեղ լացաւ. «Աստուած ին, տես թէ ինչքան տխուր եմ ես առանց զաւակի, օգնէ ինձի որպեսզի հայր ըլլամ»:



երգեց

Իր կինը՝ Աննա տունն էր: Ան կը լսէր երբ երեխաներ փողոցին մէջ կը խաղային: Այս, ինք ալ ինչքան կ'ուզէր զաւակ մը ունենալ:

Արդեօք ի՞նչ ըրաւ ան: Նայէ՛ երեք նկարներուն եւ ✓  
նշանը դիշու ճիշդ նկարին կողքին:



աղօթեց

Յանկարծ իրեշտակ մը եկաւ եւ Յովակիմին ըսաւ.  
«Աստուած քեզի եւ կնոջու աղջիկ զաւակ մը պիտի տայ»:

Քանի մը անիս վերջ Մարիամը ծնաւ:



Անոր ծնողները ինչքան շնորհակալութիւն յայտնեցին Աստուծոյ: Անոնք խոստացան որ իրենց աղջիկը Աստուծոյ պիտի ծառայէ: Երբ ան երեք տարեկան էր, Յովակիմ եւ Աննա Մարիամը տարին տաճար, որպէսզի միշտ Աստուծոյ ինտ ըլլայ:

Մարիամ երբ մեծցաւ, Յիսուսի Մայրը դարձաւ:

Յոգեւոր բառարան

## ԱՍՏՈՒԾԱԾԻՆ

Մայր Աստուծոյ (Մարիամ)

## Մենք ալ կը տօնենք

Աբրահամ եւ Սառա խրախնանք ըրին,  
որպէսզի ուրախանան Իսահակի ծնունդին  
համար:

Իւրաքանչիւր ընտանիք իր ձեւը ունի իր  
ուրախութիւնը արտայայտելու:

Այստեղ գծէ՛ թէ քու ընտանիքը ի՞նչ կ'ընէ,  
որպէսզի դուն ուրախ ըլլաս:

## Օգոստոս

Յիսուսի մեծ ծնողներուն՝ Յովակիմի  
եւ Աննայի հանդէաւ մեր սէրը  
կ'արտայայտենք, որ մեզի տուին  
իրենց աղջիկը՝ Մարիամը: Իրենց  
տօնին օրը, մեր Եկեղեցւոյ մէջ իրենց  
նուիրուած շարականներ կ'երգենք:

## Մեպտեմբեր

Նաեւ իրենց աղջկան՝ Սուրբ Կոյս  
Մարիամի ծննդեան օրը կը տօնենք:  
Ան մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի  
մայրը դարձաւ:

Մենք շատ կը յարգենք զինք եւ կը  
կոչենք Աստուծածին:

## Սորվէ՛ Եւ Երգէ՛ այս շարականը ուսուցչին հետ:



### ՏԱՆ ՄԵԶ՝ ԲՆՏԱՆԻՔԻՆ ԲԱԺԻՆԸ

Աստուածաշունչին մէջ բազմաթիւ ծնողներու պատմութիւնը արձանագրուած է, որոնք համամարդկային այն ուրախութիւնը զգացած են, որ իւրաքանչիւր ծնող կը զգայ երբ զաւակ մը աշխարհ կը բերէ: Այս դասին մէջ երեսաները տեսան Աբրահամի եւ Սառայի ուրախութիւնը, ինչպէս նաև Յովակիմի եւ Աննայի ուրախութիւնը: Երկու անգաւակ զոյգեր, որոնք իրենց հաւատքին իրեւ պատաժան՝ զաւակներ ստացան: Մանուկներու ծնունդին պատճառած ուրախութիւնը կը շարունակուի մանուկին աճնան հետ, ինչպէս նաև երբ անոր աստուածատուր շնորհները կը սկսին զարգանալ: Աբրահամ մեծ ուրախութիւն սարքեց երբ իր զաւակը ծնաւ ու թվատուեցաւ, շնորհները կը սկսին զարգանալ: Աբրահամ մեծ ուրախութիւն սարքեց երբ իր զաւակը ծնաւ ու թվատուեցաւ, եւ հաւատքով սպասեց Աստուծոյ այն խոստումին, թէ «Անոր միջոցաւ բոլոր ազգերը պիտի օդինուին»: Արդարեւ, իւրաքանչիւր մարդկութիւնը Յովակիմի եւ Աննայի աղջկան՝ Ս. Կոյս Մարիամի միջոցաւ, որ Աստուածամայրը դարձակի յաջորդներուն՝ Յովակիմի եւ Աննայի աղջկան՝ Ս. Կոյս Մարիամի միջոցաւ, որ Աստուածամայրը դարձաւ, համայն մարդկութիւնը օրինուեցաւ երբ ան մայր դարձաւ աշխարհի Փրկիչին: Այս արդար զոյգերը՝ Աբրահամ, համայն մարդկութիւնը օրինուեցաւ երբ ան մայր դարձաւ աշխարհի Փրկիչին: Այս արդար զոյգերը՝ Աբրահամ եւ Սառա, ու Յովակիմ եւ Աննա, շատ սիրեցին իրենց զաւակները եւ խնամեցին զանոնք, որպէսզի Աստուծոյ ծրագիրը անոնց միջոցաւ իրագործուի: Մենք, իրեւ անոնց հոգեւոր յետնորդները, կոչուած ենք մեր զաւակներուն մէջ Աստուծոյ ծրագիրը իրագործելու, նոյնիսկ անչափահաս տարիքի մէջ զանոնք Աստուծոյ ճամբուն մէջ դնելով: Ակաւասիկ կարգ մը առաջարկներ այդ գծով.

1. Զաւակիդ հետ գտի՞ր եւ կարդա՛ Աստուածաշունչէն Խահակին ծննդեան դրուագը, **ԾԱՄԸՐԸ 21.1.3, 5-8:** Ապա ըստ՝ զաւակիդ որ դասարանին մէջ սորված իր պատմութիւնը պատմէ: Օգնէ՝ զաւակիդ հարցումներ հարցնելով: Կրնաք նաև ըսել իրեն, որ պատմութեան նկարները գտէ:
2. Զաւակիդ պատմէ իր ծնած օրուան մասին: Պատմէ՝ այն ուրախութիւնը զոր դրու եւ անուսինդ ամբողջ ընտանեած զգացիք իր ծնունդով: Պատմէ՝ թէ ինչ ուրախութիւն կը տիրեր, երբ ընտանիքի անդամները եւ հարազատներ եկան նորածինը տեսնելու: Եթէ նկարներ ունիք, զանոնք ալ ցոյց տուէք:
3. Մասնաւոր օր մը ունեցի՛ր, զաւակիդ աճումով ուրախանալու: Այդ օրը կրնայ ըլլալ անոր տարեղարձին օրը, կամ այն սուրբին տօնը, որուն անունը տրուած է անոր:
4. Յիսուսի մեծ ծնողներուն՝ Յովակիմի եւ Աննայի օրինակին հետեւիր, քու զաւակդ Աստուծոյ Տունը տանելով հետեւողականօրէն, որպէսզի բարեպաշտական լաւ սովորութիւնները սորվի: Միասնաբար ալօթեցք այս ոսկեայ համարը:-

**«Որդեակ, հօրդ ուրախութիւնը Եղիր եւ մօրդ Երջանկութիւնը»:**

## ԶԱՔԱՐԻԱ ԵՒ ԵՂԻՍԱԲԵԹ Կ'ՈՒՐԱԽԱՆԱՆ

Փառք տուեք Աստուծոյ, որովհետեւ Ան եկած է իր ժողովուրդը փրկելու:

Ըստ Պուկասի 1.68



### Գոտերն...

Մանուկ մը երբ ծնի, անոր ծնողները եւ հարազատները շատ կ'ուրախանան: Անոնք կ'ուզեն գիտնալ նորածինին անունը: Անոնք կ'ուզեն գիտնալ թէ ի՞նչ գոյն ունին մանուկին



աչքերը



եւ



մազը

«Մանուկը որո՞ւն կը ննանի» կը հարցնեն անոնք:

Մամաները եւ պապաները շատ մեծ ապագայ մը կը տեսնեն իրենց զաւակներուն մէջ: Անոնք միշտ կը մտածեն թէ ի՞նչ մեծ մէկը պիտի ըլլայ իրենց զաւակը ապագային: Կը յիշե՞ս թէ ծնողքդ քեզի առիթով մը հարցուցեր է թէ՝ «Ի՞նչ պիտի ըլլաս երբ մեծնաս»:

Թիւ 1 գոյէ այն նկարին քով, որ շատ կը փափաքիս ըլլալ ապագային:



Թիւ 2 գոյէ այն նկարին քով, որ քու երկրորդ փափաքդ կրնայ ըլլալ:



Ես երբ մեծնամ \_\_\_\_\_ պիտի ըլլամ:

Գտի՞ր Զաքարիայի եւ Եղիսաբեթի զաւակին անունը: Յրեշտակ մը անոնց ըսաւ թէ իրենց զաւակը ի՞նչ պիտի ըլլայ ապագային:

## Զաքարիա եւ Եղիսաբէթ կ'ուրախանան

ՀԱՅ ՂՈՒԿԱԽ 1.5-25, 57-80

Զաքարիան անուշ խունկ կը մատուցէր տաճարին մէջ: ԱՅ Աստուծոյ իրեշտակը տեսաւ եւ շատ վախցաւ: Յրեշտակը ըսաւ. «Մի՛ վախնար Զաքարիա: Աստուած քու աղօթքդ լսեց: Քու կինդ՝ Եղիսաբէթը շուտով զաւակ մը պիտի ունենայ: Դուն անոր անունը Յովիաննէս պիտի դնես: Քու զաւակդ Աստուծոյ մեծ ծառան պիտի ըլլայ»:

Յովիաննէս պատճառ պիտի ըլլար, որ ծնողները աւելի լաւ հոգ տանէին իրենց զաւակներուն: Եւ ժողովուրդը, որ Աստուծոյ անհնագանդ էր, պիտի սկսէր մտածել թէ ինչպէ՞ս պէտք է ապրի, որ հաճելի ըլլայ Աստուծոյ: Յովիաննէս պիտի պատրաստէր ժողովուրդը Յիսուսի գալուստին:

Զաքարիան հարցուց. «Ասիկա ինչպէ՞ս կրնայ ըլլալ: Ես եւ իմ կինս շատ ծերացած ենք»: Յրեշտակը պատասխանեց. «Ես Գաբրիէլն եմ: Աստուած ինծի որկեց, որպէսզի այս լաւ լուրջ տամ քեզի: Քանի որ ինծի չհաւատացիր, համր պիտի ըլլաս եւ պիտի չկարենաս խօսիլ, մինչեւ որ այս բաները պատահին»:



Զաքարիան տուն գմաց եւ շատ չանցած իր կինը արդէն զաւակ մը կը սպասէր: Երբ Եղիսաբէթ ծնաւ իր զաւակը, բոլոր դրացիները եւ հարազատները ուրախացան:

Անոնք ուզեցին Զաքարիա դնել նորածինին անունը: Բայց Եղիսաբէթ ըստ «Ո՛չ, անոր անունը Յովիաննէս է»: Անոնք իօրը հարցուցին: Զաքարիան գրեց.

«Անոր անունը Յովիաննէս է»:

Ծիշդ այդ վայրկեանին Զաքարիան սկսաւ խօսիլ: Լսողները բոլորը զարմացան եւ ըսին. «Այս փոքրիկը երբ մեծնայ, ի՞նչ պիտի ըլլայ արդեօք»: Անոնք գիտցան որ Աստուած անոր հետ է: Յետոյ Զաքարիա Սուրբ Հոգիով լեցուեցաւ եւ սկսաւ օրինել Աստուած:



**Օրինեա՞լ է Աստուած, Խրայէի Աստուածը,  
Մեր Աստուածը մեզի Փրկիչ մը տուաւ:  
Դուն, իմ զաւակս, Աստուծոյ մարգարէն պիտի կոչուիս:  
Դուն ամէն ինչ պիտի պատրաստես Տիրոջ համար:**

Երբ Յովիաննէս կը մեծնար, Աստուծոյ Հոգին կը զօրացնէր զինք:

Զաքարիայի եւ Եղիսաբէթի նման,  
քու ծնողներդ եւ ընտանիքիդ անդամները Աստուծմէ կը խնդրեն,  
որ մեծ մարդ մը ըլլաս դուն եւ ուրիշներուն օգտակար դառնաս:  
Ասիկա է իրենց աղօթքը քեզի համար:

Թող

անունդ գրէ հոս

Աստուծոյ շնորհըով մեծնայ:

## Օրինեցէք Աստուած աղօթքով ու խունկով

Զաքարիան քահանայ մըն էր: Ան ծառայեց Աստուածոյ, մարդոց աղօթել սորվեցմելով տաճարին մէջ: Ան խունկ կը վառէր բուրվառին մէջ: Ան կը խնկարկէր եւ խունկը վեր-վեր բարձրանալով անուշահոտութիւն կը տարածէր տաճարին մէջ:

Խունկը կը յիշեցնէ ժողովուրդին, թէ իրենց աղօթքները վեր կը բարձրանան եւ Աստուածոյ կը հասնին, ինչպէս խունկին ծուխը վեր կը բարձրանայ: Զաքարիան իր սաղմոսը աղօթեց ժողովուրդին հետ եւ ըսաւ.

Բուրվառ

**Թող իմ աղօթքներս խունկին նման վեր բարձրանան, Տէ՛ր:**


Սաղմոս 1412

Նոյն այս սաղմոսը մենք կը կառուանք եկեղեցւոյ մէջ ամէն երեկոյ:

Սարկաւագը կը խնկարկէ բուրվառով: Սարկաւագը երբ խնկարկէ, մենք պէտք է խաչակնքենք մեր ունմքը:



## Եկեղեցւոյ մէջ կը տօնենք Յովհաննէս Մկրտիչին ծննդեան տօնը



Ամէն տարի, Եկեղեցին կը տօնէ Յովհաննէս Մկրտիչի ծննդեան տօնը, Յիսուսի Ս. Ծննդեան տօնէն անմիջապէս ետք: Զաքարիայի եւ Եղիսաբէթի գալուքը՝ Յովհաննէս մեծցաւ ու Աստուծոյ օգնականը դարձաւ: Ան պատրաստեց ժողովուրդը Յիսուսի գալուստին:

Յովհաննէս մկրտեց Յիսուսը Յորդանան գետին մէջ: Այդ պատճառաւ մենք Յովհաննէսը կը կոչենք Մկրտիչ: Յովհաննէս գիտեր որ Յիսուս Աստուծմէ դրկուած Փրկիչն էր: Ան ժողովուրդին ըսաւ որ հետեւի Յիսուսի:

Դոս քանի մը ձեւեր կան, որով կրնանք նմանիլ Յովհաննէս Մկրտիչին:

Իւրաքանչիւր նախադասութեան եւ իրեն  
համապատասխանող նկարին միջեւ գիծ մը քաշէ:

1. «Ներողութիւն ըսէ, Լուսին»:



2. Կերակուր տո՛ւր անօթի եղողին:



3. Մի կռուիր ընկերներուդ հետ:



## Միասին երգեմք

Այսօթ ձայ - նըն հայրա - կան յերկ - նից իշ - եալ  
հա - նո - յա - կան

Յոգեւոր բառարան

### ԲՈՒՐՎԱՌ

Խուճեկ վառելու  
Եկեղեցական առարկայ

## ՏԱՆ ՄԷՋ՝ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲԱԺԻՆԸ

Այս դասը երեխաներուն բացատրեց թէ իրենք ինչքան մեծ ուրախութիւն կը պատճառեն իրենց ծնողներուն։ Այդ ուրախութիւնը մանուկը կրնայ տեսնել իւրաքանչիւր ժամանակը և ծնողներուն կողմէ իրենց տրուած ուղղութիւններուն մէջ։ Վստահաբար հարցուցած էք ծեր զաւակին. «Ի՞նչ պիտի ըլլաս երբ մեծնաս»։ Յարցում մը, որ ծեր զաւակը կը մոէ իր մէջ որոշ կարողութիւններ յայսնաբերելու։

Չեր զաւակին հետ հետեւեալները գործադրեցէք.-

- Աւետարանական **Դուկաս 1.5-25, 57-66** հատուածը կարդացէք։
- Եկեղեցի գացէք եւ ծեր զաւակին ցոյց տուէք մկրտութեան աւագանը։ Ընդհանրապէս մկրտութեան աւագանը կերեւ կամ կողքին դրուած կ'ըլլայ Յովուսի մկրտութեան պատկերը։ Միասնաբար նայեցէք նկարին, եւ ծեր զաւակին ըստը որ Յովիաննես Մկրտիչը ցոյց տայ անոր մէջ։
- Ըսէք որ թուղթի մը վրայ ծեր զաւակը գրէ Յովիաննես Մկրտիչին տրուած կոչումները՝ Մկրտիչ, Կարապետ (առաջնորդող)։ Կրնաք նաեւ փաղաքշական անուններ ալ աւելցնել՝ Մկօ, Կարօ Եւայլ։
- Եթէ Յովիաննես Մկրտիչին տրուած անուններէն մէկը կը կրէ ծեր զաւակը, անոր անուանակոչութիւնը տօնեցէք։ Կամ եթէ կը ճանչնաք այդ անուններէն մէկը կրող երեխայ մը, ծեր զաւակը թող շնորհաւորէ զայն, ըստ լով «Անունով պղ ապրիս»։

## ՅՈՎՍԵՓ ԱՅՍ ԱՇԽԱՐՀԻ ՎՐԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՀԱՅՐԸ ԿԸ ԴԱՌՆԱՅ

Դայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո:

*Ըստ Մատթեոսի 6.9*

### Գործոցներ...

Ամէն մարդ մայր ու հայր ունի: Մեր մամաները եւ պապաները մեզ կը սիրեն զանազան ձեւերով:

Այս նկարներուն մէջ եղած հայրերուն նայեցէք: Ի՞նչ կ'ընեն անոնք: Դատեցէք յարմար բառը եւ գրեցէք նկարին տակը գտնուող տողին վրայ:



Խաղալ  
պաշտպանել  
սորվեցնել  
սիրել  
կերակուր գնել



Երբեմն երբ հայր մը կը բացակայի, երեխան կ'ունենայ մէկը որ իրեն հոգ կը տանի: Ատիկա կրնայ ըլլալ մեծ հայրը, քեզին կամ բարեկամ մը:

Աստուած Յովսէփին պարտականութիւն տուաւ, իր օաւակին՝ Յիսուսի հայրը ըլլալու: Մտի՛կ ըրէք իր պատմութիւնը:

# ԱՍՏՈՒԱԾԱՅԱՐՄՁԵՒ

## Յովաչ երեք երաշներ Տեսաւ

ՀԱՅ ՄԱՏԹԵՈՆ 1.18-25, 2.13-23



Մարիամ



Յովսէփ




Իրեշտակ



Յիսուս



Կ'ապրէր Նազարէթի մէջ: Ան նշանուած էր մարդու  
մը հետ որ կը կոչուէր: Օր մը Մարիամ մը  
տեսաւ, որ իրեն ըսաւ. «Դուն օրինուեցար,  
Աստուած քեզի հետ է: Դուն զաւակ մը պիտի ունենաս, որուն անունը պիտի  
դնես: Անիկա Աստուծոյ Որդի պիտի կոչուի: համաձայն գտնուեցաւ ինչ որ  
Աստուած ըսած էր: Երազ տեսաւ: մը խօսեցաւ իր հետ. «Յովսէփ, այս  
մանուկը որ պիտի ծնի, Սուրբ Հոգիէն է: Մի՛ վախնար եւ ամուսնացի՛  
Մարիամին հետ: Երբ մանուկը ծնի, անոր անունը ոհիր, որովհետեւ անիկա  
իր ժողովուրդը պիտի փրկէ իրենց մեղքերէն: Եւ  
ամուսնացան: Անոնք Բեթղեհէմ ճամբորդեցին,  
որ ի ընտանիքին քաղաքն էր,  
որպեսզի իրենց անունը արձանագրել  
տային: Բեթղեհէմի մէջ ի զաւակը  
ծնաւ ախոռի մը մէջ, որովհետեւ  
պանդոկներուն մէջ տեղ չկար:  
Մանուկը կոչեցին




## Յովսէի Յիսուսը կը տանի Եգիպտոս



Դարձեալ  մը երեւցաւ  ի, իր երազին մէջ: «Արթնցիր Յովսէի, արթնցիր: Ներովդէս թագաւորը կ'ուզէ սպաննել քու զաւակդ: Այս երեխան եւ իր մայրը եւ Եգիպտոս գնա: Յոն մնացիր, մինչեւ որ քեզի ըսեմ որ վերադառնաս»:

 առաւ  ը եւ  ը եւ Եգիպտոս տարաւ զանոնք: Աստուած զանոնք առաջնորդեց Եգիպտացի բարի ընտանիքի մը մօտ, ուր անոնք ապրեցան: Անոնք երեք տարի մնացին Եգիպտոսի մէջ:

Երբ  երեք տարեկան էր, Աստուած իր  ը դրկեց  ին մօտ, դարձեալ երազի մէջ:  ը ըսաւ  ին, թէ այլեւս ապահով կերպով կրնար իր երկիրը՝ Յրէաստան վերադառնալ: Իրենց բարի իշուկը  եւ  դարձեալ շալկեց իր կրնակին վրայ: Երբեմն  վար կ'իջնէր իշուկէն եւ իր հօր ձեռքէն բռնած կը քալէր:

Երբ անոնք հասան Յրէաստան,  գնաց իր քաղաքը՝ Նազարէթ եւ իր ընտանիքին հետ ապրեցաւ ինն:

## Յիսուս իր հօրմէն դասեր կը սորվի

Յովսէփ շատ լաւ հայր մը եղաւ Յիսուսի համար: Յիսուս շատ կը սիրեր իր հայրը եւ կը յարգէր զայն: Ան շատ մը բաներ սորվեցաւ իր հօրմէն՝ Յովսէփին: Նկարներուն նայէ եւ ☺ ժպտուն դէմք մը դիր անոնց դիմաց, որոնք ըստ քեզի Յիսուս սորվեցաւ իր հօրմէն:



## ԿԵԱՆՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

### ՄԵՐ ԵՐԿԱՆԱԼՈՐ Դայրը


Յովսէի Յիսուսին սորվեցուց սիրել Աստուած, մեր Երկնալոր Դայրը: Յիսուս իր ծնողքին հետ կ'աղօթէր, եւ աղօթարան կ'երթար ամէն շաբաթ, իր հօր ձեռքէն բռնած:

Յիսուս երբ մեծցաւ, իր աշակերտներուն աղօթել սորվեցուց: Ահա թէ ի՞նչ աղօթեց ԱՅ: Ուսուցիչիդ հետ աղօթէ հետեւեալը.-



**Տերունական Աղօթք**

Դայր մեր  
որ յերկինս Ես,  
սուրբ Եղիցի անուն քո,  
Եկեսց արքայութիւն քո,  
Եղիցին կամք քո,  
որպէս յերկինս եւ յերկրի:  
Զիաց մեր հանապազորդ  
տուր մեզ այսօր  
Եւ քող մեզ զպարտիս մեր,  
որպէս եւ մեք քողումք  
մերոց պարտապանաց:  
Եւ մի՛տանիր զմեզ ի փորձութիւն,  
այլ փրկեա՛զմեզ ի չարէ:  
Զի քո է արքայութիւն  
Եւ զօրութիւն եւ փառք  
յալիտեանս յալիտենից,  
Ամէն:



Յոգեւոր բառարան  
**ԱՂՕԹԱՐՍ**  
Աղօթելու վայր

## ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅԻՒԿ

Մկրտիչ Խրիմեանը Յայ Եկեղեցւոյ կաթողիկոսներէն է: Ան շատ հոգ կը տանէր իր ժողովուրդին: Ան սորվեցուց թէ ինչպէս իրարու հետ համերաշխ պէտք է ապրին անոնք: Ան սորվեցուց թէ ինչպէս հոգ պէտք է տանիլ այս աշխարհին՝ կենդանիներուն, բոյսերուն, գետերուն եւ լիճերուն: Ան կը յիշեցնէր թէ այս բոլորը Աստուծոյ տուած նուէրներն են մեզի:

Կարմիր գոյնով նշուած տառերը շարջով գրեցէք, որպէսզի գիտնաք թէ ի՞նչ կը կոչէր ժողովուրդը իր այս Կաթողիկոսը:



## ՏԱՆ ՄԵԶ՝ ԸՆՏԱՆԵՐԻՆ ԲԱԺԻՆԸ

Այս դասին մէջ ձեր զաւակը լսեց Յիսուսի ծննդեան եւ կանուխ տարիներուն դրուագմերը: Նիւթը գլխաւորաքար Յօվսէփի հայրութիւնն էր, իրեն Յիսուսի այս աշխարհի հայրը: Երեխաները շուտով պիտի կարենան բարդացան ընել իրենց ընտանիքին հետ իրենց կեանքին ու աճնան, եւ Յիսուսի աճնան միջեւ իր ընտանիքին մէջ, յատկապէս հետեւելով այն ծնողական սիրոյն, որ Մարիամ եւ Յօվսէփ ունեին Յիսուսի նկատմանք:

Երանի թէ բոլոր երեխաներն ալ բախտ ունենան հայրական սէր որ գործուրանք տեսնելու, անոնց ներկայութեանը: Ինչքան աւելի մեծ բախտաւորութիւն է, եթէ երեխաներ հօր պատականութիւնը կատարող յաւելեալ անձեր ալ ունենան իրենց ընտանիքին մէջ, օրինակ մեծ հայր մը, քեզի մը կամ լաւ բարեկամ մը: Ննան անձեր հոգ կը տանին անոնց, ժամանակ տրամադրելով, սորվեցնելով անոնց պէտք եղածը, դաստիարակելով զանոնք իրենց աճնան ընթացքին մէջ: Սուրբ Յօվսէփ ճիշդ այդ անձը եղաւ Յիսուսի կեանքին մէջ:

Մեր Եկեղեցին կը դաւանի Նիկիական հանգանակին մէջ, թէ Յիսուս Քրիստոս, Սուրբ Երրորդութեան Երկրորդ դեմքը, «կատարելապէս ծնաւ Սուրբ Կոյս Մարիամէն, որմէ առաւ նարմին, հոգի եւ միտք, եւ ինչ որ կայ մարդուն մէջ, ճշմարտապէս եւ ոչ թէ երեւութապէս»: Յետեւաքար, հասակ առնող Յիսուսը պէտք ունէր այս աշխարհի վրայ հօր մը, որ հոգ տանէր իրեն, հոգար իր կարիքները, եւ ուղղութիւն տար՝ սիրելու զնստուած: Մեծագոյն պատիւը որ Յիսուս տուաւ իր երկրաւոր հօր՝ Յօվսէփին, եղաւ այն սէրը եւ յարգանքը, որով ան աճեցաւ եւ կապի մէջ մտաւ իր երկնաւոր Յօր՝ Աստուծոյ հետ: Պատուելով Յօվսէփը, որ ընդունեց Աստուծոյ կոչը՝ ըլլալու Յիսուսի երկրաւոր հայրը, Եկեղեցին զայն կը կոչէ «հայր Աստուծոյ», եւ այլ սուրբերու հետ կը տօնէ իր յիշատակը:


1. Յիշելով Յօվսէփ, աղօթեցէք ձեր զաւակին հետ անոր որդիին՝ Յիսուսի սորվեցուցած աղօթքը՝ Յայր Մեծ որ: Սորվեցուցէք անոնց, որ այս աղօթքը սկսած ատեն պէտք է լինքերնին խաչակնքն ըսելով.

«Օրինեալ Տէր մեր Յիսուս Քրիստոս, ամէն»: Ապա շարունակեն ըսելով. «Յայր մեր որ յերկինս ես, Սուրբ Եղիշի աճուն քո: Եկեսց արքայութիւն քո, Եղիշին կամք քո, որպէս յերկինս եւ յերկի: Զիաց մեր հանապարհը մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեզ թողումք մերոց պարտապանաց: Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փորկեա զմեզ ի չարէ: Զի քո է արքայութիւն եւ գօրութիւն եւ փառք յափեան յափեանից, Ամէն»:

2. Օգնեցէք ձեր զաւակին որ յիշէ անձ մը որ հօր պէս հոգածու է իրենց համար: Կրնան մէկէ աւելի անձեր յիշեն: Թող գծեն մկար մը, որ յիշեցն այդ անձին իրենց ըրած բարիքներէն յատկանշական պահ մը:

Եկեղեցին շատ տօներ ունի:  
Սուրբ Խաչի Վերացման տօնը կը տօնէ Սեպտեմբերին,  
իսկ Յիսուսի Ծննդեան տօնը՝ Յունուար 6-ին:





### Սիրելի՝ ծնողներ

Սուրբ Խաչի Վերացման տօնի եւ Յիսուսի Սուրբ Ծննդեան տօնի դասերը պարզապես օրինակներ են, ցոյց տալու թէ Եկեղեցին ինչպես կը տօնախմբէ քրիստոնեական կեանքին կարեւոր դեպքերը:

## ՍՈՒՐԲ ԽԱԶԻ ՎԵՐԱՅՄԱՆ ՏՕՆԸ

Ես ոչ մեկ բանով այնքան կը հպարտանամ  
որքան մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչով:  
Ըստ Գաղատացիներում 6.14



### Գոտինք...

Ամէն առաւոտ դպրոց գացած ատեն, զանազան նշաններ կը տեսմեն ճամբուն ընթացքին:

Փողոցին անկիւնը նշան մը կը տեսմեն: Անիկա ինքնաշարժները կեցնող նշանն է:

Երբ այս նշանը տեսմեն, կը գիտնաս որ շոշանիմ մէջ դպրոց մը կայ, ուրեմն երեխաներ կրնան անցնիլ հոնկէ:



Այս նշաններուն նայեցէք: Ի՞նչ կը յիշեցնեն անոնք ծեզի:  
Իւրաքանչիւրին տակը գրեցէք այն բառը, որ կը համապատասխանէ նկարին:




Նշանները մեզի յիշեցումներ կը կատարեն:  
Ի՞նչ բաններ քեզի կը յիշեցնեն Յիսուսը:  
Անոնցմէ մէկը գծէ՝ այստեղ:



Յիսուս մեզի շատ աղուոր նշան մը տուաւ, որպէսզի զինք յիշենք: Յաջորդ էջին պատմութիւնը կարդա՛, որպէսզի սորվիս թէ ի՞նչ է այդ նշանը:

## Յիսուս մեջի նշան մը ՏՈՒՄ

ՀԱՅ ՅՈՎԱՆԱԼԻ 3.1-15, ՄԱՐԿՈՒՏ 15.20-25, 16.1-20, ՄԱՏԹԵՈՒՏ 24.30



Նիկողեմոս շատ կարեւոր իրեայ մարդ մըն էր, որ Երուսաղեմի մէջ կ’ապրէր: Ան շատ կը սիրէր մտիկ ընել Յիսուսի խօսքերը: Ան գիտէր որ Յիսուս Բարի Լուր մը ունէր տալու ժողովուրդին: Ան լսեց, Երբ Յիսուս ըսաւ. «Զղջացէ՞ք ձեր մեղքերուն համար, մկրտուեցէ՞ք, Սուրբ Հոգին առէք, եւ դուք սիրելի պիտի ըլլաք Աստուծոյ»:

«Ասիկա ինչպէ՞ս կրնայ ըլլալ» հարցուց Նիկողեմոս: Յիսուս բացատրեց անոր. «Աստուծոյ Որդին խաչ պէտք է բարձրանայ: Ան որ հաւատայ Անոր, միշտ պիտի ապրի»:

Յիսուսի աշակերտները Երբ լսեցին որ Ան կ’ըսէ թէ պիտի խաչուի, շատ տխրեցան:

Եկաւ օր մը, Երբ Յիսուս խաչուեցաւ: Նիկողեմոս հոն էր


Եւ տեսաւ թէ ինչպէս իր Վարդապետը խաչին վրայ կը մեռնէր: Յիսուսի աշակերտները վար առին Անոր մարմինը խաչին վրայէն: Արցունքուտ աչքերով անոնք փաթթեցին զայն կտաւով Եւ դրին նոր փորուած գերեզմանի մը մէ:

Երեք օր վերջ, անոնց արցունքները ուրախութեան փոխուեցան: Քանի մը կիներ որոնք գերեզման գացած էին, վազելով Ետ Եկան, լաւ լուր մը տալով. «Յիսուս Յարութիւն առած է» ըսին անոնք ուրախութեամբ: «Ես տեսայ Յիսուսը, Ան ողջ է», ըսաւ Մարիամ Մագթաղենացին:

Յիսուս Յարութիւն առնելէն վերջ,  
բազմաթիւ առիթներով եկաւ եւ իր  
աշակերտներուն երեւցաւ ու անոնց  
հետ խօսեցաւ: Ան ըսաւ որ իր  
ձեռքերուն դպչին: Ան հաց եւ ձուկ  
կերաւ անոնց հետ: Եւ ապա Ան ըսաւ  
որ յիշեն ինչ որ խոստացած էր իրենց:

Յիսուսի երկինք երթալէն վերջ, իր  
աշակերտները յիշեցին ինչ որ ըսած  
էր իրենց. «Մի՛ տխրիք: Ես միշտ ձեզի  
հետ պիտի ըլլամ: Դուք դարձեալ  
պիտի տեսնէք զիս: Այդ օրը դուք իմ  
Նշանս պիտի տեսնէք երկինքին վրայ: Յետոյ զիս պիտի տեսնէք ամպերուն  
վրայ, մեծ զօրութեամբ եւ փառքով  
եկած ատենս»:

Ներկէ այս նկարը, որպեսզի տեսնես  
Յիսուսի նշանը: Գոյներու թիւներուն նայէ որպեսզի իւրաքանչիւր բաժինը  
պահանջուած գոյնով ներկես:



## ԿԵԱՆՔԸ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

### Քրիստոնեաները Յիսուսի խաչը գտան

Յիսուսի Յարութենէն շատ տարիներ վերջ, Քրիստոնեաները կորսնցուցած էին այն խաչը, որուն վրայ մեռած էր Յիսուս: Հեղինէ թագուհին Յիսուսի հետեւորդ մըն էր: Ան Երուսաղէմ եկաւ, որպեսզի գտնէ Յիսուսի խաչը:

Ծերուկ մարդ մը գիտէր այն տեղը, ուր այդ խաչը փոշիներու եւ աղբերու տակ մնացած էր:


Հեղինէ թագուհին գործաւորներ վարձեց, որպեսզի այդ շրջանը փորեն: Անոնք գտան Յիսուսի խաչը: Անոնք վեր բարձրացուցին զայն եւ փառք տուին Աստուծոյ: Ուրախութեանք անոնք կոնցին զայն դէպի Սուրբ Յարութեան Տաճարը:



### Քրիստոնեաները կը պաշտեն Յիսուսի խաչը

Մենք կը պաշտենք Յիսուսի Սուրբ խաչը, ամէն անգամ երբ կը համբուրենք զայն, եւ կը խոնարհինք անոր առջեն:

Սուրբ խաչը մեզի կը յիշեցնէ թէ՝



**Յիսուս մեօաւ մէր մէղքերուն համար:**

**Յիսուս Յարութիւն աօաւ:**

**Յիսուս կը սիրէ մեզ:**

**Յիսուս միշտ մեզի հետ է:**

Արեւելք

Յիւսիս

Արեւմուտք

Հարաւ



## ՄԵՆՔ ԿՐ ՄՈՇԵՆՔ

Ամէն տարի մենք կը տօնենք Խաչվերացի տօնը, որ նուիրուած է Յիւսուսի Սուրբ Խաչին: Այդ օր մասնաւոր թափօր մը տեղի կ'ունենայ Սուրբ Խաչով: Խաչը կը զարդարուի ռեհաններով: Եպիսկոպոսը խաչը կը բարձրացնէ եւ կ'օրինէ ժողովուրդը եւ ամբողջ աշխարհը Անդաստանի արարողութեան ընթացքին: Աս ժողովուրդին վրայ կը սրսկէ վարդի օրինուած ջուր:


Հոգեւոր բառարան

### ԱՆԴԱՍՏԱՆ

Աղօթք մը՝  
ամբողջ աշխարհը  
օրինելու

## Այս շարականը կ'երգենք Սուրբ Խաչը պաշտելու ընթացքին:

Քու Խաչիդ աօջեւ կ'երկրպագենք, ո՞վ Յիսուս:  
Եւ Քու Սուրբ Խաչելութիւնդ կը փառաւորենք:



### ՏԱՆ ՄԷՋ՝ ԸՆՏԱՄԵՐԻՔԻՆ ԲԱԺԻՆԵ

Եկեղեցւոյ տօները մեզի կ'օգնեն, որպէսզի զօրացնենք մեր հաւատքը: Եկեղեցական արարողութիւնները մեր հաւատքի արտայայտութիւնն են: Սեր Տիրոց Յիսուս Քրիստոսի խաչը նշան մըն է իր զոհաբերութեան ու սիրոյն: Ան խաչին վրայ մեռաւ որպէսզի մեզ ազատ մների տիղմէն: Իր Յարութեամբ, Յիսուս մահապատիժի գործիք եղող խաչը փոխակերպեց մահուան վրայ յաղթանակ տանելու նշանի: Խաչվերացի տօնը, Դայ Եկեղեցւոյ մեջ կատարուող Խաչի չորս տօներուն մեծագոյնն է: Անիկա կը տօնուի Սեպտեմբեր 15-ի ամենն մօտիկ Կիրակի օրը:

Քրիստոնեաները կանուխ դարերէն յարգանք ունեցած են Սուրբ Խաչին նկատմամբ: Խաչը յարգելով մենք կը պաշտենք Ան որ այդ Խաչին վրայ բարձրացաւ: Սուրբ Յակոբոս Տեառնեղբայր առաքեալ, որ առաջին եպիսկոպոս պոստ եղաւ Երուսաղէմի, առաջին անգամ ինք բարձրացուց Խաչը հաւատացեալներուն դիմաց: Ան երգեց այս շարականը, որ մենք կ'երգենք այսօր ոչ միայն Խաչի տօներուն առթիւ, այլ մանաւանդ Աւագ Շաբթուան ընթացքին:

**Խաչի Թո Քրիստոս, Երկիրպագանեմք Եւ զուրբ Խաչելութիւնդ Թո Փառաւորեմք Եւ զուրբ Յարութիւնդ Թո մեծացուցանեմք: Եկայք հաւատացեալք Երկրպագեսուր Քրիստոսի Աստուծոյ մերոյ, վասն զի Եկն ի մեռն Խաչին իւրոյ շնորհեաց պարգեւս աշխարհի:**

Զաւակդ առաջնորդէ յարգանք ընծայելու Սուրբ Խաչին:

1. Միշտ իր վրայ թող կրէ մկրտութեան իր խաչը:
2. Սորվեցուր Երկիրածութեամբ խաչակնքել իր դէմքը:
3. Ուհան ցանէ տանդ մեջ, Եւ Խաչվերացի տօնեն օր մը առաջ Եկեղեցի տար, որպէսզի Անդաստամի արարութեան ընթացքին գործածուի:
4. Փորձ զրէ որպէսզի դասին մեջ դրուած Երկու շարականներէն մէկը սորվի անպայման:

## ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Բարի լուր մը պիտի տամ ծեզի:

Ըստ Ղուկասի 2.10




*Գրտե՞ն...*



«Անի, մամաս խոստացաւ որ գալ շաբաթ մեր ընտանիքը եւ բարեկամները դաշտագնացութեան պիտի երթանք» ըսաւ Սիլվան:

Սիլվան շատ ուրախ է: Ան գիտէ որ իր մաման պիտի յարգէ իր խոստումը:



Յիշէ՛ խոստում մը որ տուած ես մէկու մը:

Քու խոստումիդ նկարը գծէ՛ այստեղ:

## Աստուած խոստում մը կու տայ

Երկար տարիներ առաջ, Աստուած իր ժողովուրդին խոստում մը տուաւ, ըսելով որ փրկիչ մը պիտի ղրկէ իրենց: Ան Գաբրիէլ հրեշտակը ղրկեց Նազարէք, Խրայէլի քաղաքներէն մէկը: Յրեշտակը բարի լուր մը բերաւ երիտասարդ աղջկայ մը, որուն անունը Մարիամ էր:

«Մարիամ, Աստուած քեզ օրինեց: Դուն տղայ մը պիտի ունենաս, եւ անունը Ֆիսուս պիտի դնես: Ան Աստուածոյ Որդի պիտի կոչուի»: Մարիամ ըսաւ. «Աստուած ինչ որ ուզէ ես պատրաստ եմ ընելու»:

## Ասուած իր Խոստութ կը Յարգէ. Յիսուս ծնաւ...


ՀԱՅ ՂՈՒԿԱԽ 2.1-20

Մարիամ եւ Յովանէի Բեթղեհէմ ճամբորդեցին, որպէսզի իրենց անունը արձանագրել տան: Պամղոկմերուն մէջ տեղ չէր մնացած: Անոնք ախոռի մը մէջ մնացին: Երբ անոնք ախոռին մէջ էին, Մարիամ ծնաւ Յիսուսը, իր առաջին զաւակը: Ան հագուստներով փաթթեց մանուկը եւ մսուրին մէջ դրաւ զայն:

Յովիւները բլուրներուն վրայ իրենց հօտին պահպանութիւն կ'ընեին: Աստուծմէ ղրկուած իրեշտակ մը եկաւ եւ զօրաւոր լոյս մը ծագեցաւ իրենց վրայ: Յրեշտակը ըսաւ. «Մի՛ վախնաք... բարի լուր մը բնրած եմ ծեզի: Աստուած իր խոստումը յարգեց: Այսօր Բեթղեհէմի մէջ Յիսուս Քրիստոսը ծնաւ: Երբ երթաք, պիտի տեսնէք մանուկ մը խանձարուրով փաթթուած եւ մսուրի մը մէջ պառկած»:

Յրեշտակներ եկան եւ Աստուած կ'օրինէին. «Փառք ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Յովիւները ըսին. «Եկէք երթանք եւ տեսնենք, ինչ որ Աստուած ըսաւ մեզի»: Անոնք երբ գտան Յովսէիը եւ Մարիամը, Յիսուս մանուկը տեսան, որ յարդէ անկողինի մը մէջ կը քնանար: Անոնք գտան ամէն բան, ինչպէս որ իրենց ըսած էր իրեշտակը: Անոնք փառք տուին Աստուծոյ այն ամէն բաներուն համար որ տեսան:



## ԿԵԱՆՔԸ ԵԿԵՂԵՑԲՈՅ ՄԷՋ


Յիսուս աշխարհը լուսաւորելու եւ մարդոց երջանկութիւն բերելու համար աշխարհ եկաւ: Հրեշտակները եւս իր ծնունդը աւետեցին հովիւներուն, Աստուծոյ լոյսը ծագեցաւ երկինքին մէջ, եւ հովիւներուն վրայ:

Մեր Լոյսին՝ Յիսուս Քրիստոսի ծնունդը մենք կը տօնենք մոմեր վառելով: Ծնունդին նախորդող Խթման երեկոյին եկեղեցի կ'երթանք, որպէսզի Աստուծոյ խոստումին պատմութիւնը լսենք: Ապա Եկեղեցւոյ մէջ գտնուողներ մոմեր կը վառեն եւ շարականներ կ'երգեն:

Յոգեւոր բառարան

### ՓԱՌԱՐԱՆԵԼ

Օրինել, յարգել, մեծարել




Դուն քու նկարդ գծէ՝ այստեղ եւ բռնած մոմդ դեղին ներկէ:

**Փաք ի բարձումս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն,  
ի մարդիկ հաճուրիւն:**

## Յիսուսի Ծննդեալ Եւ Մկրտութիւնը կը տօնեմք

Սուրբ Ծննդեան առաւտուն Սուրբ Պատարագին ներկայ կը գտնուիմք: Ապա կը կատարենք Յիսուսի Մկրտութիւնը, որ տեղի ունեցած էր Յորդանան Գետին մէջ: Մեծ տաշտի մը մէջ ջուր կը լեցնեն: Քահանան կ'օրինէ ջուրը իր ձեռքի խաչով, եւ ապա Միւռոն կը կաթեցնէ անոր մէջ, աղաւնիի ձեւով ամանի մը մէջէն: Ամէն մարդ այդ օրինուած ջուրէն կը խմէ եւ կը համբուրէ խաչը:



Չեր քահանան օր մը քեզի եթէ ըսէ որ իրեն օգնես Զրօրինէքի պատրաստութեան, այս նկարին մէջ գտնուած առարկաներէն որո՞նք պիտի գործածուին կը կարծես: Ներկէ՛ երեք առարկաներ, որոնք կը գործածուին զրօրինէքի ժամանակ:

## **Բարի Լուրջ պէտք և պատմենք որիշմեռու**

Յովիներոյ երթ վերադաշնամ իրենց ոչկարևոր տով, սկսան լոտուած օդինել, Եւ աճենու պատմել աս

Յովիներուն ճնան, մեր առ Աստուած Խորհրդ, Եւ տարբեն ծեւեղոյ Էիսուի վի օճճեան լուրջ Կը շնորհաւուած կը պարագան ժողովուն ճնան ու առ Շնորհաւուած օթերոց Մարտ կը շնորհաւուած կը պարագան ժողովուն ճնան:

Բարեւու կ'ընկած:

**Քիշոտու ծմառ  
և յայտնեցաւ...**

Բարեւ սարսափուն  
և յայտնեցաւ...

**Չեզի, մեզի  
մեծ արտիս...**



## Սուրբ Ծննդեան շարականներ կ'երգենք

The musical notation consists of two staves of music. The first staff starts with a treble clef, a key signature of one flat, and a 2/4 time signature. It contains lyrics in Armenian: Այսօր տօն է սուրբ ծը - նըմի - եան, ա - ւե - տիս: The second staff continues with a treble clef, a key signature of one flat, and a 2/4 time signature. It contains lyrics: Տեա - նըն մեր - բոյ եւ յայտ - նու - թեան, ա - ւե - տիս: A horizontal pink bar follows the second staff.

### ՏԱՆ ՄԷՐ՝ ԲԵՏԱՆԿՈՒՐԻ ԲԱԺԻՆԸ

Յայ Եկեղեցւոյ մէջ Սուրբ Ծննդեան տօնը կը կատարուի Յունուար 6-ին: ԱՅ վերյիշեցումն է ոչ միայն մեր Փրկչին ծննդեան, այլ անոր կապուած շարք մը դէպքերուն, ինչպէս մոգերուն այցելութիւնը եւ իր մկրտութիւնը: Այս բոլոր դէպքերը մեզի կը յայտնեն թէ Յիսուս Աստուածորդին է, Քրիստոսն է: Շիշդ այդ պատճառով այս տօնը մենք կը կոչենք «Աստուածայայտնութիւն» (Theophany):

Սուրբ Ծննդեան տօնին նանուկները շատ ուրախ կ'ըլլան, որովհետեւ այդ առիթով սովորութիւն է նույն ստանալը: Լաւ կ'ըլլայ որ մանուկներուն ըսենք, որ Յիսուսի ծննդին ատեն մենք իրենց նույներ կու տանք, որովհետեւ Յիսուս ի՞նք մեծագոյն նույնը եղաւ աշխարհին, որ Աստուած տուաւ մարդկութեան: Զաւակդ մասնակից դարձն' Ա. Ծննդեան տօնին, ոչ միայն ընտանիքիդ մէջ կատարուած տօնախմբութիւններով, այլ Եկեղեցւոյ տօնախմբութիւններուն ներկայ գտնուելով:

1. Խթման գիշերը միասնաբար Եկեղեցի գացէք, որպէսզի «ճրագալոյց» արարողութեան մասնակցիք: Մանուկներուն համար Քրիստոսի Լոյս ըլլալը ուղղակիորեն առնչուած է մոմավառութեան հետ:
2. Աւետարամեն կարդացէք Յիսուսի Ծննդեան դրուագը, յատկապէս **Ղուկաս 2.1-21:** Ըսէք ծեր երեխային, իր բառերով վերարտադրել պատճութիւնը:
3. Օգնեցէք անոնց որ գծեն կամ կատվ շինեն մսուր մը, որուն մէջ դնեն Մարիամը, Յովսէփը, Յիսուս մանուկը, հրեշտակները, հովհանները, ոչխարհները եւ երեք մոգերը:
4. Սուրբ Ծննդեան պատկեր մը դրէք ծեր տան մէջ:
5. Սուրբ Ծննդեան պատարագին ներկայ գտնուեցէք, հաղորդուեցէք, ջրորիմերին ներկայ գտնուեցէք եւ օրինուած ջուրեն խմեցէք:
6. Զիրար շնորհաւորեցէք Ա. Ծննդեան յատուկ խօսքերով: Բարեւողը կ'ըսէ. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ»:
7. Բարեւը ստացողը կ'ըսէ. «Զեզի մեզի մեծ աւետիս»:

## ՎԵՅՏԱՐԵԿԱՆԻ ԱՂՈԹՔՆԵՐ

1. Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգևոյն Սրբոյ. Ամէն:
2. Փառք Հօր եւ Որդոյ եւ Հոգևոյն Սրբոյ. Ամէն:
3. **Տերունական Աղօթքը**

Յայր մեր, որ յերկինս ես,  
սուրբ եղիցի անուն քո,  
եկեսցէ արքայութիւն քո,  
եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի:  
Զիաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր  
եւ թող մեզ զպարտիս մեր,  
որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց:  
Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,  
այլ փրկեա՛ զմեզ ի չարէ:  
Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք  
յաւիտեանս յաւիտենից.

Ամէն:

## ԴԱՒԱՏՔԻ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ

4. Յաւատամ Յայր Սուրբ, Աստուած ճշմարիտ:  
Յաւատամ Որդին Սուրբ, Աստուած ճշմարիտ:  
Յաւատամ Հոգին Սուրբ, Աստուած ճշմարիտ:

*Ա. Պատարագ*

## ԱՌԱԽՈՏԵԱՆ ԱՊՈԹՔՆԵՐ

5. Տեր եթէ զշրջումն իմ բանաս, բերան իմ երգեսցէ  
զօրինութիւնս քո:

*Սաղմոն 50.17*

6. Առաւոտ Լուսոյ Գրեց Ս. Ներսէս Ծնորհալի

Առաւոտ լուսոյ  
Արեգակն արդար,  
Առ իս լոյս ծագեա:

Բիսումն ի Յօրէ  
Բիսեա՝ ի հոգւոյս,  
Բան քեզ ի հաճոյս:

## ԱՊՈԹՔ ԳՈՐԾ ՄԸ ՍԿՍԵԼԵ ԱՌԱՅ

7. Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա ի մեզ, Տէ՛ր,  
Եւ զգործս ձեռաց մերոց յաջողեա մեզ, Տէ՛ր. Ամէն:

*Սաղմոն 89.17*

## ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՊՈԹՔ

8. Իմաստութիւն Յօր՝ Յիսուս, տո՛ւր ինձ իմաստու-  
թիւն, զբարիս խորհենլ եւ խօսել եւ գործել առաջի  
քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի  
գործոց փրկեա՝ զիս եւ ողորմեա՝ քո արարածոց եւ  
ինձ բազմամեղիս:

*Ս. Ներսէս Ծնորհալի*

## **ԱՊՈԹՔ՝ ՔՆԱՆԱԼԵ ԱՌԱՅ**

9. Պահապան ամենայնի Քրիստոս, աջ քո հովանի լիցի  
ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի: Ի նստիլ ի տան, ի  
գնալ ի ճանապարհ, ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք  
սասանեցայց եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ  
բազմամեղիս:

Ա. Ներսէս Շնորհալի

## **ԱՊՈԹՔ՝ ԲԱԾԵԼԵ ԱՌԱՅ**

10. ճաշակեսցուք խաղաղութեամբ զկերակուրս որ  
պատրաստեալ է մեզ ի Տեառնէ, օրինեալ է Տէր ի  
պարզեւս իւր. Ամէն:

## **ԱՊՈԹՔ՝ ԲԱԾԵԼԵ ԵՏՔ**

11. Փառք կերակրողին տիեզերաց, որ զմեզ կերակրեաց  
եւ լիացոյց: Նմա փառք յաւիտեանս. Ամէն:

## **ԱՆԿՈՂԻՆԻ ԱՊՈԹՔ**

12. Տէր իմ Աստուած, Տէր բարերար,  
Դու պահպանէ զիս այս գիշեր:  
Տուր հօրս եւ մօրս կեանք երկար,  
Եւ երջանիկ, հանգիստ օրեր:  
Թող պահապան իրեշտակդ չիեռանայ իմ մօտէն  
Եւ զիս արթնցնէ զուարթագին. Ամէն:

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՕԹ

«Աստուած Իր Սիրով Ստեղծեց Զիս» դասագիրքը Gospel Light կազմակերպութեան կողմէ պատրաստուած եւ World Vision կազմակերպութեան կողմէ հրատարակուած է: Ի տարբերութիւն անգլերէնին, այնտեղ ներմուծուած են Հայ Առաքելական Եկեղեցւոյ սուրբերու վարքն ու կարգ մը նշանաւոր տօներն ու աւանդութիւնները:

Սոյն հրատարակութեան մէջ կարեւոր դերակատարութիւն ունեցած է Լիբանանի Հայոց Առաջնորդ Գերշ. S. Գեղամ Ս. Եպս. Խաչերեանը, իսկ թարգմանութիւնն ու վերախմբագրումը կատարուած է Գերպ. S. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթճեանի կողմէ:

